30 ՄԱՐՏ 2007 ՈՒՐԲԱԹ 58 (3710)

# Azg Ազգ

## ԱՄՆ Մենատի հանձնաժողովն ընդունեց Դինքի սպանության դատապարտման բանաձեւը

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը չորեքշաբթի օրը միաձայն ընդունել է «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւ, որից թեեւ ընդհանուր ձեւակերպման մեջ դուրս է մնացել ցեղասպանություն բառը: Սակայն հատուկ նշված է, որ «Ակոսի» խմբագրապետը դատական հետապնդման էր ենթարկվում Թուրքիայի քր. օր.-ի 301-րդ հոդվածով՝ հայերի 1915 թ. կոտորածը ցեղասպանություն կոչելու համար:

Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակի հաղորդագրության համաձայն, Հրանտ Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւում հանցագործությունը որակվում է որպես «փոխրոգության ամոթալի ակտ՝ իրագործված օրենքի եւ արդարադատության հանդեպ խամահրանքով»: Բանաձեւում ընդգծվում է Դինքի նվիրվածությունը ժողովրդավարական արժեքներին եւ մամուլի ազատությանը:

Ինչպես մինչ այդ հնչած բանավոր խոսքերում, բանաձեւում նույնպես Թուրքիային կոչ է արվում քրեական օրենսգրքից հանել 301-րդ հոդվածը, որը սահմանափակում է արտահայտվելու ազատությունը: Բացի այդ, եւս մեկ անգամ հաստատվում է Միացյալ Նահանգների դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ, բանաձեւում Թուրքիային կոչ անելով դիվանագիտական, քաղաքական եւ առեւտրային հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ:

Ա. Հ.

## Ամերիկյան ռադար կտեղադրվի Չեխիայում

Չեխիան Միացյալ Նահանգների հետ սկսում է պաշտոնական բանակցությունները հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի ռադարային հաստատման տեղակայման առնչությամբ: «Մայակին» հղում անելով, «Ռեգնում» գործակալությունը տեղեկացնում է, որ Պրահայում նման որոշում է կայացվել մարտի 28-ին տեղի ունեցած կառավարության նիստում: Միեւնույն ժամանակ չեխական ընդդիմությունը պահանջում է այդ առնչությամբ հանրաքվե անցկացնել:

ՎԱՆ

## Բացվեց Աղթամարի վերանորոգված Սուրբ Խաչը

### *Եկեղեցին գործելու է իբրեւ թանգարան՝ նպաստելու Վանի ճանաչողությանը*

ՀԱՅՈՐ ՅՈՒԲԻՆ

Երեկ պաշտոնական արարողությամբ բացվեց Վանա լճի Աղթամար կղզու վերանորոգված Սուրբ Խաչ եկեղեցին: CNN-Turk-ն ու «Միլիեթը» բացումը լուսաբանում են «Ամդամարի եկեղեցին բացվեց իբրեւ թանգարան», իսկ թուրքական հանրային հեռուստատեսությունը՝ «Կատարվեց Ամդամարի թանգարանի բացումը» վերնագրերով: Ի դեպ, թուրքերեն «ամդամար» բառը նշանակում է սպիտակ երակ:

Սբ. Խաչի բացման արարողությանը մասնակցել են Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Աթիլլա Քոչը, նախարարությանն առընթեր մշակութային արժեքների եւ թանգարանների գլխավոր վարչության պետ Օրհան Դյուզգյունը, Վանի նահանգապետ Օզդեմիր Ցաֆաջաքը եւ Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը: Ներկա են գտնվել նաեւ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Նենսի Մակելդովնին, Իսրայելի դեսպան Պինհաս Ավիվին, Հայաստանի պատվիրակության հետ օտարերկրյա այլ հյուրեր, գիտության եւ մշակույթի քուրդ գործիչներ, ինչպես նաեւ պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ:

Բացման արարողությունը լուսաբանել են նաեւ ԱՄՆ-ի, Գերմանիայի, Բելգիայի, Դանիայի, Լիբանանի, Իսրայելի, Ռուսաստանի, Իտալիայի, Հոլանդիայի եւ Անգլիայի առաջնակարգ լրատվամիջոցները:

Ինչ վերաբերում է ելույթներին, առա ամբիոնին առաջինը մոտեցել է մշակութային արժեքների եւ թանգարանների գլխավոր վարչության պետ Դյուզգյունը: Նա նշել է, որ վերջին տարիներին Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարությունը մեծ կարեւորություն է տալիս հուշարձանների վերականգնմանը, այդ ոլորտում կատարվել են բազմաթիվ աշխատանքներ եւ չեն մոռացվել երկրի հայ քաղաքացիները, որոնց հետ թուրքերը միեւնույն դրոշի ներքո գոյակցում են հարյուրավոր տարիներ:

Տես էջ 2

## «Ազգի» վաղվա ներդիրում

**Այս շաբաթվա «Հասարակական-քաղաքական» ներդիրում «Ո՞Ւմ է հասարակությունն ուղարկում խորհրդարան. արդյոք իր ընտրախավի՞ն»՝ Կարինե Դանիելյանի հոդվածը ներկայացնում է մեր սոցիոլոգների եւ քաղաքագետների դիտարկումները հայ ներկա իրականությունում էլիտայի գոյության ու չգոյության մասին:**

**Գերմանիայում թուրքական իսլամի ակտիվացման եւ ամերիկյան գլոբալացման գաղափարախոսությանը հակադրվող իսլամի մասին են ներդիրի հաջորդ 2 վերլուծությունները:**

**Գոհար Գետրգյանի ակնարկը պատմում է SOS մանկական գյուղակի մասին, որը «ՍՕՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի բարեխնամության շնորհիվ օթեւան է դարձել անտուն, անընտանիք երեխաների համար:**

**Ռուբեն Թարումյանն անդրադառնում է Նելսոն Շահնազարյանի՝ «Դելավոյ էքսպրեսս»-ում հրապարակած «Կարո՞ղ է արդյոք Հայաստանը դառնալ առաջին աշխարհի երկիր» հոդվածին, իսկ հայկական լրատվական դաշտի մասին ընդհանրապես խորհրդածում է Աշոտ Գրիգորյանը:**

## HSBC բանկ Հայաստանը նոր գլխավոր գրասենյակ կունենա Երեւանում

**Ինչպես տեղեկացանք էյչ էս Բի Սի բանկ Հայաստանից, ապրիլի 5-ին տեղի կունենա բանկի նոր գլխավոր գրասենյակի բացումը Տերյան 66 հասցեում: Բացմանը եւ դրան հաջորդած մամուլի ասուլիսին մասնակցելու են Լոնդոնի էյչ էս Բի Սի բանկի օտարերկրյա մասնաճյուղերի եւ դուստր ընկերությունների գծով գործադիր տնօրեն, էյչ էս Բի Սի բանկ Հայաստան տնօրենների խորհրդի անդամ Ջոնաթան Քրայթոնը, էյչ էս Բի Սի բանկի օտարերկրյա մասնաճյուղերի եւ դուստր ընկերությունների գծով մեկ այլ բարձրաստիճան ղեկավար, էյչ էս Բի Սի բանկ Հայաստան տնօրենների խորհրդի անդամ Դերեկ Լանքը եւ էյչ էս Բի Սի բանկ Հայաստան տնօրենների խորհրդի գործադիր տնօրեն Թոնի Թերները:**

Ա. Մ.

## Հայաստանում կանայք կազմում են բնակչության 51,7%-ը

**ԵՐԵՎԱՆ, 29 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: 2006թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում ապրում էր 1 մլն 665 հազար 123 կին, ինչը կազմում է հանրապետության բնակչության ընդհանուր թվի 51,7%-ը: Նույն օրվա դրությամբ կանանց ամենաբարձր տեսակարար կշիռն արձանագրվել է Երեւանում՝ 53,3%, իսկ ամենացածրը Գեղարքունիքում՝ 49,7% տոկոս: Այս մասին հայտնեց ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Մարդահամարի եւ ժողովրդագրության բաժնի պետ Կարինե Կույումջյանը:**

**Ըստ նրա, հանրապետությունում 2006թ.-ին նորածինների 46,4%-ը կազմել են աղջիկները: Կ.Կույումջյանը նշեց, որ թեեւ սովորաբար տղաներ ավելի շատ են ծնվում, սակայն նրանց շրջանում արձանագրվում է մահացության ավելի բարձր ցուցանիշ:**

ՀԱՄԱՌՈՏ

## Բելառուսի նախագահը կայցելի Ադրբեջան

Մոտ ժամանակներս Ադրբեջան կայցելի Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն: Այդ մասին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպման ժամանակ տեղեկացրել է Բելառուսի վարչապետ Սերգեյ Սիդորսկին: Հանդիպմանը կողմերն ընդգծել են, որ Ադրբեջանի նախագահի Բելառուս այցելությունից շատ ժամանակ չի անցել, սակայն արդեն կոնկրետ արդյունքներ կան երկկողմ հարաբերություններում, ուստի Լուկաշենկոյի Ադրբեջան այցելությունը կնպաստի երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը:

## Ադրբեջանը «ՄԻԳ» է գնում Ուկրաինայից

Երեկ Ադրբեջանի ռազմաօդային ուժերը ցուցադրել են նոր ձեռք բերված ինքնաթիռներն ու այլ ավիասարքավորումները: «Ազերի.ռրես» գործակալության տեղեկացմամբ, Ադրբեջանում ցուցադրական թռիչքներում ներկայացվել են նոր ձեռք բերված «ՄԻԳ-29» ռմբակոծիչներ եւ ռազմական ուղղաթիռներ: Ադրբեջանական լրատվամիջոցները հաճույքով նշում են, որ այդօրինակ ինքնաթիռներ կան ԱՊՀ եւ ՆԱՏՕ անդամ շատ երկրների ռազմական ուժերում: Ինքնաթիռները, որոնց եւ ընդհանրապես ռազմական տեխնիկայի գնումների ցուցադրությունն առաջին անգամ է տեղի ունենում Ադրբեջանում, ձեռք են բերվել Ուկրաինայից:

Ա. Հ.

## Սահմանադրական խրթին մեկնաբանությունները չէ, որ խանգարելու են նոր վարչապետ ու կառավարություն ունենալ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին օրերին երեւի միայն «Ազգը» ձեռնպահ մնաց՝ խոսելու նոր վարչապետի նշանակման թեմայից, տարբերակներ վերլուծելուց, վարվելակերպի լավ տոնը դա էր պահանջում: Սակայն այսպիսի անսպասելի իրավիճակներում հենց լրատվամիջոցները կարող են սթափ հայացք նետել կողքից եւ տեսնել ուրվագծվող հեռանկարի լույսն ու սվերը, եւ անգամ երբեմն տեսանելի դարձնել այն, որը, թվում է, պարզ է, բայց ցայտնոտային իրավիճակում չի երեւում: Նախապես հիշեցնենք հանրահայտը. մի մոռացեք Հայաստանի նախագահի մեծ սերը անսպասելի եւ կայծակնային որոշումների հանդեպ: Այս մեկը թեեւ հիշեցնում ենք, բայց կանխատեսել չենք կարող՝ անսպասելին կանխատեսելի չէ, կամ՝ այնքան էլ կանխատեսելի չէ:

Մնացածի մասին կարելի է խոսել: Լրատվամիջոցները, այդ թվում արտերկրի, համոզված պնդում են, որ վարչապետը պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն է լինելու, ուղղակի սահմանադրությամբ դեռ ժամանակ կա այդ նշանակումը հասարակության սեփականությունը դարձնելու: Սակայն այս տեսակետը մի դիտանկյունից ճնշադատության չի դիմանում: Սերժ Սարգսյանը, որ հավակնում է վարչապետ լինել ԱԺ մայիսի 12-ի ընտրություններից հետո, բնականաբար եթե Հանրապետականը համամասնականի գոնե 35 տոկոս ձայները ստանա, ոչ մի խնդիր չունի անցումային՝ մի 50-60 օրվա վարչապետ լինելու, նախորդի ծրագիրը կրկին ձեւական ներկայացնելու, ընտրությունների ողջ ընթացքի մութնոլորտն իր վրա կրելու, փաստորեն արժեզրկվելու: Դա նրան մեծ վատություն կլինեի: Նա, թվում է, պիտի չուզենա անցումային վարչապետ լինել: Իսկ անցումային վարչապետների հաջողված փորձ, եւ ավելի երկար ժամանակի համար, Հայաստանն ունի: Օրինակ՝ ժամանակին Խորով Հարությունյանին շնորհակալություն հայտնեցին դժվարին իրավիճակում մի քանի ամսով գործադիրը ղեկավարելու համար, մինչեւ որ համաձայնեցված վարչապետ նշանակվեց:

Տես էջ 3

# Համաշիրությունը որպես ներընտանեկան եւ ներկուսակցական կլան

«Համաշիրությունից տեղեկանք վերցնելիս որեւէ նշանակություն չունի՝ ով որքան պարտք ունի», ասում է «Համայնք եւ իրավունք» ՀԿ նախագահ Սամվել Մկրտչյանը: Նրա ձեռին դիմումներ կան, որոնցում Շենգավիթ համայնքի բնակիչները խնդրում են իրենց մեկ համաշիրությունից փոխանցել մեկ այլ համաշիրություն: «Բազմաթիվ նման դիմումներ եմ ստանում, քանի որ հիմնականում մեր համաշիրությունների պատկերը հետեւյալն է: Համաշիրությունները դարձել են ներընտանեկան կլաններ: Դրանք գործում են ոչ թե ի շահ ժողովրդի՝ շենք-շինությունների հիմնախնդիրներն են լուծում, այլ սեփական ընտանիքի համար աշխատավարձեր են կազմակերպում: Իսկ վարձավճարները չեն ծախսվում ճիշտ նպատակների համար: Շենքերը մնում են անմխիթար վիճակում: Ամբողջ Երեւան քաղաքի պատկերն է այդպիսին: Նմանատիպ մի քանի դեպքերի հետեւանքով դատախազություն եմ ուղարկել փաստեր: Գումարները վերադարձվել են, մեղավորներին վարչական տուգանքի են ենթարկել: Ունեցել ենք նաեւ դեպքեր, երբ քաղաքացին հայտարարել է, որ համաշիրության նախագահը 1000 դրամ է շորթել տեղեկանք տրամադրելու համար, որն աղբոքինի գործողություն է: Սակայն, երբ հենց նույն քաղաքացուն առաջարկում ենք գրավոր հաստատել իր ասածը, հրաժարվում է», ասում է զրուցակիցս:

Բնակչության իրավագիտակցության բացակայությունը, թե ակտիվ քաղաքացի չլինելու հանգամանքը թույլ չի տալիս բնակիչների 99 տոկոսին խորամուխ լինել իրենց իրավունքների եւ պարտականությունների մանրամասների մեջ: Նույնիսկ համաշիրության կազմում ընդգրկվելուց հետո իրենց իսկ համայնքային խնդիրների վրա «թքած ունենալու» հայկական սովորույթը խիստ տգեղ է եւ մտահոգիչ: Այն գորշ գույնով է ներկայացնում ներկա հասարակությանը եւ վտանգավոր օրինակ է քաղաքացիների ապագա սերնդի դաստիարակության համար:

Ինչպես հաստատում է Ս. Մկրտչյանը, Հայաստանում գրանցված են 500 համաշիրություններ: Նրանցից ոմանք չկարողանալով աշխատել, միացել են այլ համաշիրությունների: Այսպիսով մեզանում գործում են մոտ 400 համաշիրություններ: Թե սրանցից յուրաքանչյուրի կազմում քանի շենք-շինություն կա, դեռ կփորձենք հաշվել, սակայն փաստ է, որ համաշիրությունը լուրջ բիզնես լինելուց բացի, նաեւ ուշագրավ կուսակցական կլան է: Սակայն սկսենք հերթով: Այսպես, յուրաքանչյուր շենք, որ ընդգրկված է համաշիրության կազմում, ամսական համաշիրության ղեկավարությանն է մուծում ամենաքիչը 20000-30000 դրամ (սոցանապահով խավի ներկայացուցիչների հարգելի չմուծումները հաշած): Անգեն աչքով դիտելով անգամ, յուրաքանչյուր համաշիրություն ամսական 300 հազարից մինչեւ միլիոնավոր դրամների շրջանառություն ունի, քանի որ «ամենախեղճ» համաշիրությունն անգամ 10-ից ավելի շենքի մարումն ու տնտեսական մասի աղահովումն իրականացնելու պատրաստակամություն է հայտնել: Բայց. «Կան համաշիրություններ, որոնք 120 շենքի մարությունն են ստանձնել, որն իրականում անհնար է, կան նաեւ 70-80 շենքով բավարարվողներ, ասում է Ս. Մկրտչյանը: Սրանց ֆինանսական շրջանառությունը լուրջ թվեր են իրականում, որոնց քչերն են անդրադառնում: Եթե դատախազությունը ճնշի իրական պատկերը եւ համադրի դրանք համաշիրության շրջանակներում պտտվող գումարների հետ, բրեական պատասխանատվության պետք է ենթարկվեն բոլոր համաշիրությունները, անխտիր բոլորը», համոզված է «Համայնք եւ իրավունք» ՀԿ-ի նախագահը, որը ցավով է խոսում պարտադիր գումարներ մուծող քաղաքացիների իրավունքների այնպիսի կոպիտ ոտնահարումից, ինչպիսին տեսնում ենք համաշիրություն-բնակիչ հարաբերությունների 99,9 տոկոսի դեպքում:

Գալով կուսակցականացման խնդիրներին զրուցակիցս փաստում է. «Ինչպես «ընդդիմադիր գործարար» երեւույթն է անհեթեթություն, այնպես էլ չկուսակցականացված համաշիրությունը: Բոլոր համաշիրությունները կախված են քաղաքեցի մահաճույքից եւ նպատակադրվածությունից: Համաշիրությունների նախագահներն անգամ այն մտասեւեռումն ունեն, որ իրենց ոչ թե ժողովուրդն է ընտրում, այլ քաղաքեցը: Մինչդեռ իրական համաշիրության մոդելը ճիշտ հակառակն է՝ համաշիրությունն անկախ կազմակերպություն է, որ ընտրվում է բնակիչների կողմից, համապատասխան գումարի դիմաց իր մուտքը, շենքն ու բակը խնամած պահպանելու համար: Մեր համաշիրությունների նախագահները իրենց կուսակցական եւ նախընտրական քարոզարշավի խնդիրները լուծելու հետեւից ընկած երեւի մոռացել են, որ իրենք կոչված են ժողովրդին, այլ ոչ թե իշխանություններին ծառայելու համար», ասում է Ս. Մկրտչյանը:

«Տերպին տերն է տարել, անտերին՝ գելը»: Այս միտքը պարարտեց մեզ, երբ ներկա եղանք երկու համաշիրական իրավունքների բախման Շենգավիթ համայնքի մի քանի բնակիչներ պատմեցին, որ իրենք ցանկանում են հրաժարվել մեկ համաշիրության չաշխատանքից եւ ամենաթող վերաբերմունքից քաղաքացիների նկատմամբ, ընդգրկվելով մեկ այլ համաշիրության կազմում: Մի կողմ թողնելով մեզ հանդիպած մի քանի քաղաքացիների ասածը, մեջբերենք միայն մի բնակչի կարծիքը, ում դուռը ծեծելով խնդրեցինք նրա վերաբերմունքի բարձրաձայնումը համաշիրություն ասված երեւույթի մասին: 50-ամյա տղամարդը, որ պարում էր առաջին հարկում, մեզ ներս չհրավիրեց, չնայած պարում էր խիստ բարեկեցիկ բնակարանում: Նա չներկայացավ եւ պարզապես ասաց, որ բոլոր դեպքերում ինքը չեզոքությունն է գերադասում: «Ազգի» հարցին, թե ո՞վ է մարում ձեր աստիճանավանդակը, բնակիչն ասաց որ միշտ էլ իր կինն է մարել ու էլի նա է մարելու: Եվ սա համաշիրության կազմում ընդգրկված շենքի բնակչի պատասխանն է: Ընդգծենք, որ շատ տանտիկինների՝ տխուր իրավիճակից դրդված մարտահրությունը երբեք պետք չէ շփոթել նրանց քաղաքացիական գիտակցության առկայության հետ, քանի որ նույնիսկ ամենազբաղված տանտիկինը բարեխիղճ ծառայություն ստանալու իրավունք ունի, որովհետեւ նախապես նա դրա համար վճարել է: Հետո՞ ինչ, որ իր վճարի դիմաց կատարվելիք աշխատանքի կամ չաշխատանքի ընթացքին հետամուտ չէ:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ,



# Բացվեց Աղթամարի վերանորոգված Սուրբ Խաչը

1-ին էջից

Դրան է հետեւել Մեսրոպ արքեպիսկոպոսի ելույթը: Ամենապատիվ պատրիարքն, ըստ վերոհիշյալ լրատվամիջոցների, Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու վերականգնման առնչությամբ արտահայտել է իր երջանկությունը, ապա եւ շարունակել. «Այս բարեհաջող վերականգնումը ցուցանիշն է այն կարեւորության, որ պատմական հուշարձաններին, ապրության գլխավոր առաջադրանքը: Նա ասել է, որ «Ամդամարի եկեղեցու հուշարձան-թանգարանը նպաստելու է Վանի ճանաչողությանը» եւ ընդգծել հուշարձանների վերականգնումը երկրում շարունակելու թուրքական իշխանությունների պատրաստակամությունը:

Այդ ընթացքում թուրքական ոստիկանությունը ձերբակալել է Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բացման

ՖՈՏՈԼՈՒՐ

ռանց խստականության, ցուցաբերում է մեր կառավարությունը: Ողջունելի է ավելի քան 90 տարի շարունակ որպես աղոթատեղի չօգտագործվող այս շենքի բնօրինակին համապատասխան վերականգնումը: Պատմական այս եկեղեցում ամեն մի աղոթք նպաստելու է մարդկանց մերձեցմանը»:

Մուքաֆյան պատրիարքը ելույթում համար Վանա լճի նավամատույցում բողոքի ակցիա կազմակերպած արհեստակցական հինգ միությունների ղեկավարներին:

Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բացումից հետո օտարերկրյա լրագրողը Մուքաֆյան պատրիարքին է դիմել «Տեղադրվելո՞ւ է եկեղեցու խաչը» հարցով, իսկ նա պատասխանել է. «Գուցե մի օր կտեղադրվի»: Նույն հարցի առնչությամբ նախարար Քոչն ասել է, որ խաչի տեղադրման խնդիրը կարող է որոշել գիտական հանձնաժողովը: Իսկ «Թույլատրելո՞ւ եք, որ տարին մեկ անգամ ժամերգություն կատարվի Սբ. Խաչ եկեղեցում» հարցին Թուրքիայի մշակույթի նախարարը, «Միլիեթի» վկայությամբ, տվել է հետեւյալ պատասխանը. «Ես չեմ կարող ինքնուրույն որոշում կայացնել»:

Ակամա հարց է ծագում՝ ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ Սբ. Խաչ եկեղեցու խաչի վերականգնման վերաբերյալ Պոլսո հայոց Մուքաֆյան պատրիարքի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարությանը հղած դիմումը նախարարությունն, ինչպես մարտի 28-ի համարում նշել է «Զամանը», կարծիքի համար փոխանցել է Թուրքիայի արտգործնախարարություն: Այլ խոսքով՝ այդ երկրում արտգործնախարարությունն է զբաղվում խաչ դնել-չդնելու հարցով...

# ՀՀ մշակույթի փոխնախարարը գոհ է Վան այցից

Երեկ Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բացմանը ներկա էր Հայաստանից հրավիրված պատվիրակությունը ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար **Գագիկ Գյուրջյանի** գլխավորությամբ: **«Ազգը»** հեռախոսազրույց ունեցավ Վանում գտնվող փոխնախարարի հետ: Պրն Գյուրջյանն ասաց. «Հայաստանի պատվիրակությունը Ախալքալաքով ու Ախալցխայով անցել է մինչեւ Արդահանի նահանգի ճանապարհը: Հենց այդ սահմանի վրա մեզ դիմավորեցին Թուրքիայի անվտանգության ծառայությունները. Վանի ու Արդահանի նահանգապետները եւ ուղեկցեցին Արդահան: Արդահանում կայացավ առաջին հանդիպումը նահանգապետի հետ, որից հետո ճանապարհվեցինք Կարս ու գիշերեցինք: Հաջորդ օրը մեզ ուղեկցող պաշտոնական խմբին էին միանում այն տեղանքների նահանգապետները, որոնց տարածքներով անցնում էինք մինչեւ Վան: Ասեմ, որ Իգդիրում եւ Բայազետում մենք այցելեցինք ու նայեցինք Իսահակ փաշայի պալատը, հին հայկական Դարոնքի բերդը, Բերկրիի ջրվեժը եւ այլն: Գալով Վան, առավոտյան ժամը 11.30-ին մասնակցեցինք Սուրբ Խաչ եկեղեցու բացմանը: Առաջինը ներկաներին ողջույնի խոսք հղեց Թուրքիայի մշակույթի նախարարության ներկայացուցիչը, որից հետո խոսքը փոխանցվեց Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մուքաֆյանին, Վանի կուսակալին՝ Օզդեմիր Չաֆաջաքին, Թուրքիայի մշակույթի նախարար Աթիլլա Քոչին»: Վերջինս իր խոսքում նշել է, որ չնայած Սբ. Խաչը մեր հուշարձանը չէ, այն մեզ վերականգնում ենք որպես մշակութային բազմազանության օրինակ:



Պրն Գյուրջյանից փորձեցինք ճշտել, թե արդյոք եկեղեցու գմբեթին խաչը կդրվի՞, թե՞ ոչ: Պրն Գյուրջյանն ասաց. «Հանդիպումների ընթացքում եղան համաձայնություններ եւ դրական կարծիքներ եւ այդ խնդիրը շուտով կլուծվի»: Իսկ թե ինչ հարցերի շուրջն են զրուցել երկու երկրների մշակույթի ղեկավարները հարցին պրն Գյուրջյանը տվեց հետեւյալ պարզաբանումը. «Ասեմ, որ Թուրքիայի մշակույթի նախարար Աթիլլա Քոչի հետ մեր զրույցները շատ հետաքրքիր ու հարթ էին ընթանում: Կարծում եմ, որ անձնական շփումները հիմք են ստեղծում համատեղ ծրագրեր իրագործելու համար»: Թուրքիայի նախարարը հայ լրագրողներին տված հարցազրույցում նշել է, որ առաջիկայում Անիում նույնպես կվերականգնվի եկեղեցի: Պրն Գյուրջյանը գոհ էր այցելությունից եւ նշեց, որ պատվիրակությանն ընձեռվել է հնարավորություն՝ շրջագայելու Վանով, որի ընթացքում ծանոթացել եւ դիտել են Ուրարտական ամրոցը: Երեկ երեկոյան «Մելիթ» հյուրանոցում մեր պատվիրակության պատվին տրվել է հրաժեշտի ճաշկերույթ: Այսօր մեր պատվիրակությունը նույն ճանապարհով կվերադառնա Երեւան:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ,

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս՝ 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅՈՒՐԻ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ՝ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅՈՒՐԻԿԵԱՆ / հեռ՝ 529221
Լրագրողների սենյակ / հեռ՝ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ՝ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ՝ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu



# ՀՀԿ-ն լուրջ մարտահրավերների առջեւ է հայտնվել

Քաղաքական շրջանակներում դեռեւս հստակ պատկերացում չկա՝ քաղաքական դաշտի եւ քաղաքական ուժերի ներկայիս դասավորության վրա ինչ ազդեցություն կունենա վարչապետ Անդրանիկ Մարգարյանի անժամանակ, ողբերգական մահը: Դա այն դեպքում, երբ Աժ ընտրություններին ընդամենը մեկուկես ամիս է մնացել:

Նոր իրողություններում քաղաքական դաշտում հնարավոր վերադասավորումները, անկախ դրանց ընդգրկած մասնաբներից, պայմանավորվելու են Հանրապետական կուսակցությունում ներքին խնդիրներով ու զարգացումներով: Կուսակցության կորուստն այնքան մեծ է ու անակնկալ, որ դժվար թե մոտակա ժամանակաշրջանում կարողանա համարժեք արձագանքել իրավիճակին, իրադարձությունների զարգացմանը եւ քաղաքական գործընթացներին, էլ չենք խոսում նախընտրական քարոզչությանը հավուր պաշտոնի նախապատրաստվելու մասին: Իհարկե, կուսակցության փաստացի ղեկավար Սերժ Սարգսյանի բավականաչափ սառը դաստելու եւ ոչ ստանդարտ իրավիճակներում սառնաարտությունը չկորցնելու հմտությունը կարող է օգնել ՀՀԿ-ին հաղթահարելու հոգեբանական ճգնաժամը, սակայն ողջ հարցն այն է՝ արդյոք Սերժ Սարգսյանը կդնի՞ այդ խնդիրը, թե՞ ոչ:

Նոր վարչապետի թեկնածության առաջադրման իրավունքը, պահպանված խաղի կանոնների համաձայն, թողնվեց Հանրապետական կուսակցությանը: Այս համատեքստում վարչապետի պաշտոնում Սերժ Սարգսյանի թեկնածության առաջադրումը միանգամայն տրամաբանական կլիներ, որովհետեւ հիմա հենց նա է կուսակցության ղեկավարը: Այսինքն՝ եթե նա, այնուամենայնիվ, նշանակվի վարչապետի պաշտոնում, ապա դա տեղի կունենա միայն այն պատճառով, որ նման մանդաս նրան տալիս է ՀՀԿ-ն, հետեւաբար գոնե բարոյական առումով ներկայիս պաշտոնության նախարարը «պարտական» կլինի ՀՀԿ-ին, ինչն էլ ենթադրում է, որ կուսակցությունը չի կորցնի քաղաքական իրադրության վրա ազդող համար առաջին ուժի պոտենցիալը: Այլ խնդիր է, որ ՀՀԿ-ն ներքին բովանդակային առումով փոփոխությունների ենթարկվելու պարտադրանքի առջեւ կկանգնի: Սերժ Սարգսյանը, իբրեւ ՀՀԿ-ն ընդամենը վերջերս լրացրած գործիչ, կուսակցության գաղափարական հայվածի կողմից իբրեւ անվերապահ գաղափարակիր չի կարող ընկալվել: Այլ կերպ ասած, բուն, ավանդական ՀՀԿ-ն ստիպված կլինի կամ համակերպվել Սերժ Սարգսյանի լիդերության հետ եւ նրա նոր խաղի կանոններն անվերապահ ընդունել, կամ նոր, իր համար ընդունելի, սակայն արտաքնապես երկրորդ համարով գործող առաջնորդ առաջ կքաշի, որը կփորձի սանձնել Անդրանիկ Մարգարյանի կատարած դերը կուսակցության ներսում: Եթե դա տեղի ունենա, ապա կվերականգնվի ուժերի հավասարակշռությունը ՀՀԿ-ում: Եթե ոչ՝ ՀՀԿ-ի որակական փոփոխության ականատեսը կլինենք:

Ընդդիմությունը փորձում է այն դիրքորոշումը հասունացնել, թե վարչապետի մահը իրեն իրենց ձիշտ դասավորության է վերադարձնում եւ մեղադրանքների ու քննադատության համար ճիշտ, հստակ հաստատեր են հայտնվում՝ ի դեմս նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի: Նման կեցվածքը ավելին չէ, քան պարզ դեմագոգիան եւ սեփական անզորությունը քողարկելու չափազանց խոցելի միջոց: Խնդիրն այն է, որ Անդրանիկ Մարգարյանը երբեք չի կանգնել ընդդիմության եւ իշխանության արանքում, այլ կերպ ասած, ընդդիմությունն իշխանությանը քննադատելուց չի խուսափել այն պատճառով, որ խնայել է Անդրանիկ Մարգարյանին: Վերջինս, չնայած իր մարդկային ուրույն հատկանիշներին, ընդդիմության կողմից ընկալվել է որպես իշխանության մաս եւ հավասարապես զերծ չի մնացել քննադատությունից: Այլ խնդիր է, որ նրա հակազդեցությունը նույնքան կոշտ ու անզիջում չի եղել, որքան իշխանության մյուս թեւերինը: Այս իրողությունից ելնելով կարող ենք փաստել, որ սրանից հետո էլ ընդդիմության մարտավարությունը իշխանության նկատմամբ մնալու է նույնքան անարդյունավետ ու անհետաքրքրական, ինչպիսին առաջ էր:

Ընդդիմության ներսում վարչապետի մահը որեւէ վերադասավորման չի հանգեցնելու, որովհետեւ Անդրանիկ Մարգարյանը, չնայած իր լոյալ վերաբերմունքին, այդ դաշտի վրա ուժեղ ազդեցություն չի ունեցել: Այս դաշտում փոփոխություններ կարող են լինել միայն իշխանության ճամբարում ուժերի դասավորության հնարավոր փոփոխությունների համատեքստում: Սակայն այս առումով էլ լուրջ սպասելիքներ չի կարելի ունենալ: Անդրանիկ Մարգարյանը զերծ էր իր քաղաքական-տնտեսական լծակները մեծացնելու հավակնություններից: Իսկ քանի որ ողջ իշխանական դաշտի կայունությունը հենց այս լծակներին տիրապետող ուժերի հարաբերություններից էր կախված, ուստի պետք է ընդունել, որ վարչապետի մահը չի կարող լուրջ վերադասավորումներ առաջացնել: Այլ հարց է, որ ներքին կադրային որոշ փոփոխությունների, դերերի ձեւավորման խնդիր կառաջացնի, ինչը տեղի կունենա երկրում սահմանադրական կարգի պահպանման, այսինքն՝ վարչապետի եւ կառավարության նշանակման համատեքստում:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄ

# Սահմանադրական խրթին մեկնաբանությունները չէ, որ...

1-ին էջից

Անցումային վարչապետ, եթե լավ մտածենք, կարող է լինել ամեն ոք, ով ի պաշտոնե մոտ է կանգնած կառավարության ամենօրյա աշխատանքին. ասենք՝ տարածքային կառավարման նախարարը, վարչապետի խորհրդական, Հայաստանի բոլոր պրոբլեմներն իմացող Վլադիմիր Մովսիսյանը, նախկին վարչապետներից Վազգեն Մանուկյանը՝ եթե նրան ուզենան, եւ ինքն ուզենա, կամ ասենք՝ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը: Իսկ Սերժ Սարգսյանն այժմ շատ գործ ունի: Այժմ այն իրավիճակն է, որ պետք է ծանրութեթեւ անելու ժամանակ ունենալ, լավ կշռադատել նախընտրական թանկ այս օրերը, Ա. Մարգարյանի մահով փաստորեն թուլացած Հանրապետականը կարգի բերել եւ իր բնականոն հուն վերադարձնել, որը պետք է անի հենց ՀՀԿ նախագահի նոր պաշտոնակատարը: Քաղաքական դաշտում էլ անպայման տեղաշարժեր կլինեն՝ դրանց հետեւելու համար էլ ժամանակ եւ աչք ուշադրություն է պետք: Բացի այդ՝ այս պահին Ս. Սարգսյանի վարչապետ նշանակվելու արդյունքում պետք է փնտրվի պաշտպանության նախարարի ընդունելի տարբերակ՝ թե՛ պրոֆեսիոնալ, թե՛ քաղաքական ուժերի կողմից ընդունելի լինելու առումով: ԼՂՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, որի անունն այդ պաշտոնի համար շրջանառում են լրատվամիջոցները, իհարկե, դրական ֆիգուրա է, բայց այդպիսի նշանակումը նպատակահարմարության տեսակետից ընդունելի չէ. երբ տեսական ժամանակ ընդդիմությունը խոսում է ղարաբաղյան կլանի մասին՝ այդպիսով ժողովրդի մեջ էլ ամրացնելով «ղարաբաղցի» տարբերակիչով հարցերին մոտենալու առաջավոր մոտեցումը, այս պահին ավելի ճիշտ կլինի ձեռնպահ մնալ այդպիսի թեկնածությունից: Ինչպես նաեւ Սերժ Սարգսյանը, եթե նույնիսկ այս անգամ չէ, շատ մոտ ապագայում վարչապետ դառնալու ցանկություն ունի՝ պետք է կենտրոնանալ Հայաստանի զինված ուժերում առկա պրոֆեսիոնալների շրջանակի վրա, եւ հենց նրանց մեջ ընտրություն կատարել: Հասարակությանն, այնուամենայնիվ, լիցքաթափել պետք է:

Իսկ վարչապետի նշանակման խնդիրը կլուծվի գուցե այս շաբաթվա վերջում, եւ սահմանադրական խրթին մեկնաբանությունները չեն կարող այստեղ որեւէ խանգարիչ դեր ունենալ, եւ եթե պետք լինի՝ անգամ Ազգային ժողովը կարող է հավաքվել, գոնե ի հիշատակ Անդրանիկ Մարգարյանի: Եվ եթե, իհարկե, մի սադրիչ ձեռք չփորձի իրավիճակը տանել իր ցանկացած ուղով: Իսկ այդպիսի բան ցանկացողներ միշտ կարող են գտնվել՝ եւ տարածաշրջանային, եւ աշխարհի մեծ խաղացողների մեջ: Ով՝ ով, բայց լրագրողներս Անդրանիկ Մարգարյանի թաղմանը, պանթեոնում, բոլորից լավ ականատես եղանք, թե ինչպես էին մեծ երկրների բավականին բարձրաստիճան ներկայացուցիչներ համբերատար սպասում թաղման թափորին, մեր երկրի նախագահին: Նրանք ուշադիր դիտում էին ամեն ինչ եւ ամեն բան, նկատում ղեկավարների ամեն շարժում, թարգմանել էին տալիս յուրաքանչյուր ասված խոսք: Ու դա ոչ միայն մեր երկրի ղեկավարի հիշատակին մատուցվող հարգանքի տուրք էր, կամ դիվանագիտական առողջակարգի անհրաժեշտ բաղկացուցիչ միայն: Նրանց շարքերն ուշադիր դիտողը նկատում էր նրանց առավել քան հետաքրքրասեր հայացքները՝ նախագահ Քոչարյանի կողքին կանգնած եւ նրա հետ աշխույժ զրուցող ԱՊՀ գործադիր քարտուղար Վլադիմիր Ռուշայլոյի ուղղությամբ: Վստահ եմ՝ Մեթյու Բրայզան ամեն ինչ կտար իմանալու, թե ինչ է խոսում Քոչարյանը Ռուշայլոյի հետ: Ու ահա, հասկանալով արտերկրի՝ Հայաստանում ներկա դիվանագիտական կորոշուի եւ նրանց պատրոնների հետաքրքրության պատճառները, այս պահին մենք պետք է ձիշտ եւ արագ որոշումներ կայացնենք՝ բաց տալ չթողնելով ուրիշների խաղերի համար, կամ այնքան տեղ թողնելով, որ խաղը չվնասի մեր պետականությանը, չանդրադառնա երկրի ներքին եւ արտաքին իրավիճակի վրա, եւ ամենակարեւորը՝ դրսի խաղացողները իրենց խաղը տանող ներսինների չգտնեն: Մինչեւ հունի մեջ դնելնք, ընտրություններ անցկացնենք՝ չընկնելով անկայուն իրավիճակների մեջ:

Իսկ եթե ամեն ինչ այնպես է, ինչպես լրատվամիջոցներն են ներկայացնում, եւ վարչապետ է նշանակվելու Սերժ Սարգսյանը, ուրեմն մեր ղեկավարները մախիմալիստ են, եւ ամեն ինչ ուզում են միանգամից եւ անմիջապես, առանց ձեւականությունների, եւ առանց մանրմուր հետեւանքները հաշվի առնելու: Բայց հիշեցնենք, մանրմուր հետեւանքները կարող են ձեւավորել մի մեծ, անդառնալի հետեւանք:

# «Վարչապետի պաշտոնն այս պահին լրացուցիչ պարտականություն է եւ ոչ թե լրացուցիչ լծակ»

## *Ի՞նչ քաղաքական զարգացումներ կլինեն եւ ո՞վ կնշանակվի վարչապետ*

***ՀՀԿ ղեկավար, վարչապետ Անդրանիկ Մարգարյանի անժամանակ մահն իսկապես ցնցեց բոլորիս: Վարչապետի վախճանը բնականորեն առաջ կբերի փոփոխությունների անհրաժեշտություն՝ հատկապես եթե նկատի ունենանք, որ երկիրը կանգնած է խորհրդարանական ընտրությունների առաջ: Քաղաքական գործիչներից, պատգամավորներից «Ազգը» փորձեց պարզել, թե քաղաքական ինչ զարգացումներ կարող են լինել վարչապետի մահից հետո եւ, նրանց կարծիքով, ո՞վ կարող է նշանակվել վարչապետ:***

ՀՅԴ-ական պատգամավոր **Գեղամ Մանուկյանը** վստահ է, որ լուրջ փոփոխություններ չեն լինի, քանի որ կա քաղաքական գիծ, որով տարիներ շարունակ աշխատել են: «Մինչեւ նախընտրական փուլի ավարտը արմատական փոփոխություններ չեն լինի, իսկ փոփոխությունների մասին կարող ենք խոսել արդեն միայն խորհրդարանական ընտրություններից հետո», ասաց պատգամավորը: Վարչապետի նշանակման առնչությամբ նա չցանկացավ կանխատեսումներ անել, բայց նրա կարծիքով «կնշանակվի այն մարդը, որին կառաջադրի Հանրապետական կուսակցությունը»:

ՀԺԿ-ի ղեկավար **Ստեփան Դեմիրճյանը** չցանկացավ պատասխանել մեր հարցին՝ նշելով, որ այս պահին նպատակահարմար չէ, ինքն էլ մի քիչ զբաղված է: Նա խոստացավ մեր հարցերին պատասխանել հետագայում: ԱԺԿ նախագահ **Շավարշ Քոչարյանը**, չկոնկրետացնելով, թե ինչ փոփոխություններ կարելի է ակնկալել առաջիկայում, այնուամենայնիվ հույս հայտնեց, որ կատարվելիք փոփոխությունները գոնե բացասական ազդեցություն չեն ունենա:

ՀՅԴ-ական մեկ այլ պատգամավոր, գրող **Ալվարդ Պետրոսյանը**՝ ընդգծելով, որ վարչապետի մահը շատ ծանր էր, նշեց, որ հանրապետականների համար կատարվածը հիմնականում հոգեբանական իմաստով լավ չէր, բայց այնպես հիմնավոր, արմատական փոփոխություններ չեն լինի, որովհետեւ «իրենք մեծ կադրային ընտրության հնարավորություն ունեն, եւ ես չեմ կարծում, որ Սերժ Սարգսյանը դեբյուտանտ, նոր դեմք է քաղաքական ոլորտում եւ ինչ-որ անկանխատեսելի հետեւանքներ կարող է ունենալ իրենց քաղաքական ուղեգծի կամ մեր քաղաքական իրավիճակի համար: Ես պարզապես կարծում եմ, որ հոգեբանական ծանր կացություն է ստեղծվել իրենց համար»: Վարչապետի հնարավոր թեկնածուի համար Ալվարդ Պետրոսյանը նշեց Սերժ Սարգսյանի անունը՝ հավելելով. «Ինքը գործադիր իշխանության փորձառություն ունի եւ տիրապետում է ամբողջ իրավիճակին»:

«Ազգային միաբանության» առաջնորդ **Արտաշես Գեղամյանն** ասաց, որ երկրում ստեղծված ծանր իրավիճակը, ազգաբնակչության դժգոհությունները պայմանավորված չեն եղել վարչապետով, այլ երկրի երկու իրական առաջնորդներով՝ նախագահ եւ պաշտպանության նախարար զույգով: Ցավելով վարչապետի մահվան համար՝ Ա. Գեղամյանը նշեց, որ գործընթացները կարագանան: «ԱՄ» առաջնորդը վարչապետի թեկնածուի հնարավոր անուն չցանկացավ նշել, բայց տվեց իր խոսքով իրավիճակի քաղաքական մոտեցումը. «Տեխնիկական վարչապետ կնշանակվի: Կնշանակվի մեկը, որը չի լինի քաղաքական դեմք եւ մարդկանց զգոնությունն ու ստեղծված մռայլ մթնոլորտը մի քիչ կմեղմվի»:

Ուշագրավ էին «Սահմանադրական իրավունքի միություն» կուսակցության նախագահ **Հրանտ Խաչատրյանի դիտարկումները**: Նա նշեց, որ վարչապետ Անդրանիկ Մարգարյանն այն վարչապետներից չէր, որը չէր նշանակվել միայն կառավարությունը ղեկավարելու համար, այլ ՀՀԿ հիմնադիր անդամներից էր, նախագահը: ՍԻՄ-ի ղեկավարի կարծիքով, վարչապետի պաշտոնը քաղաքական պաշտոն էր եւ բնական է, որ նրա մահից հետո քաղաքական ասպարեզից դուրս է եկել մի ֆիգուր, որի բացակայությունն ազդելու է ոչ միայն վարչապետի փոփոխության հետ կապված խնդրի վրա, այլեւ քաղաքական գործընթացների իմաստով: Նա վստահ է, որ որոշ գործընթացներ տեղի կունենա նաեւ կուսակցության ներսում. «Կլինեն մարդիկ, որ կփորձեն սերտ հարաբերություններ ստեղծել նաեւ նոր ղեկավարի հետ, ոմանք կփորձեն եւ կստացվի, ոմանք էլ կփորձեն բայց չի ստացվի: Ներկուսակցական այդ տեղաշարժերն իրենց ազդեցությունը կունենան կուսակցության ընդհանուր վարքի վրա»: Հրանտ Խաչատրյանը համոզված է, որ ներքաղաքական դաշտում էլ փոփոխություններ կլինեն. քանի որ մյուս կուսակցությունների համար էլ այլ խնդիր էր, երբ զբաղվում էին ՀՀԿ-ի նախագահի հետ, կուսակցության ճանապարհը հարթած եւ անցած մարդու հետ, եւ մեկ այլ խնդիր է, երբ հարաբերվելու են ՀՀԿ-ի հետ՝ հանձին մեկ ուրիշի, որը հավանաբար չի լինի այդ բոլոր արժեքների կրողը: Հրանտ Խաչատրյանի կարծիքով, քաղաքական տեղաշարժերը միայն ՀՀԿ-ով եւ նրա ղեկավարի մահվամբ չեն պայմանավորված: Վարչապետի խնդիրն ըստ նրա բարդ խնդիր է: « Ինձ թվում է, որ այնուամենայնիվ հաջորդ վարչապետը նեղուս շատ չի ցանկանալու սանձնել այդ պաշտոնը՝ ով էլ որ լինի, նույնիսկ եթե դա Սերժ Սարգսյանն էր, քանի որ արդեն կար որոշակի սցենար: Այլ խոսք է, դա մեզ դուր էր գալիս, դուր չէր գալիս, հանրապետության համար շահեկա՞ն էր, բայց կա սցենար, որտեղ ամեն ինչ հաշվարկված էր, մտածված. եւ հիմա՝ մի լրացուցիչ պատասխանատվություն: Ես հիմա վարչապետի պաշտոնի սանձնումը դիտում եմ ավելի շատ որպես լրացուցիչ պատասխանատվություն, քան լրացուցիչ լծակ», հավելեց նա:

ԳՈՌՈՒ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# Գիտական եւ «ազգային-ազատագրական» մոտեցումներ հայագիտությանը

## Ճշգրիտ գիտություններից դեպի հայ ժողովրդի ու հայոց լեզվի ծագումնաբանություն

Մասնագիտությամբ ֆիզիկոս, կենսաբան Արմեն Պետրոսյանը հայագիտությամբ սկսել է զբաղվել բավականին ուշ, գրեթե այն տարիքում, երբ գիտնականները սովորաբար դոկտորի կամ առնվազն թեկնածուի կոչում են ստանում: Դրանից, սակայն, նա բնավ չի վհատվել կամ ընկրկել, այլ իր ոլորտն մտի ու եռանդուն խառնվածքի շնորհիվ, կարճ ժամանակահատվածում ճշգրիտ է հայ ժողովրդի ծագման նոր տեսություն, համաձայն որի մ.թ.ա II-I հազարամյակում վաղնջահայերենով խոսողներն ապրել են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանում: Հայերի ծագման մասին բոլոր տեսակետները նա ենթել է իր «Հայոց ազգածագման հայցերը» գրքում:

«35 տարեկան էի, երբ հայրս՝ հայագետ Եղիշե Պետրոսյանը մահացավ սամոխի խաղկեղից: Վատառողջ էի ու մտածում էի, որ երկար չեմ ապրի: Հայաստանի հանրագիտարանում խմբագիր էի աշխատում, նաեւ դասական կիթառ դասավանդում երաժշտական դպրոցում, բայց ձգտում էի այնպիսի գործով զբաղվել, որը կխլեր ամբողջ եռանդս», պատմում է Արմեն Պետրոսյանը:

Անվանի ազգագրագետ Սարգիս Հարությունյանն այդ ժամանակ նրան է նվիրում Ռուսաստանում տպագրված առասպելաբանական հանրագիտարանը, որի հայկական բաժնի հեղինակն էր: Մինչ այդ Արմենը հայագիտական բազմաթիվ գրքեր ու հանդեսներ էր կարդացել, բայց գիտական ուսումնասիրությամբ զբաղվելու բուռն ցանկություն կարծես թե չէր ունեցել: «40 տարեկան էի, երբ որոշես լաբորանտ ընդունվեցի ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ: Իհարկե, ցավալի էր այդ տարիքում ընդունվելը, բայց շատ երջանիկ էի այնտեղ աշխատելու համար»:

Ֆիզիկոս դառնալու նախնական ցանկությունն իր ներաշխարհից չի բխել, այլ այն տարիների գիտական կյանքում ֆիզիկայի առաջատար դերից: Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետից տեղափոխվեց կենսաբանության ֆակուլտետ ու համալսարանն ավարտեց կենսաֆիզիկոսի մասնագիտացմամբ:

Իր անցած ճանապարհի համար նա այսօր չի զղջում, որովհետեւ ամբարած գիտելիքները եթե ոչ ուղղակիորեն, ապա անուղղակիորեն առնչվում են հայագիտությանը, օգնում բացահայտումներ կատարելիս. «Էվոլյուցիոն տեսության իմացությունն օգնում է պատկերացնելու լեզուների զարգացումը: Մոդելները բավականին նման են, օրինակ, լեզուների ու տեսակների ծագումը, մի լեզվից մի քանի բարբառների առաջացումը, լեզուների տրոհումը եւ այլն: Ճշգրիտ գիտություններում գոյություն ունի գիտական աշխատանքը շարադրելու հատուկ ձեւ՝ խստորեն հաշվի առնել հնարավոր բոլոր հակափաստարկները: Հարցն այն է, որ հումանիտար գիտության մեջ փաստարկները բացարձակ ճշգրիտ չեն, ամենաճշգրիտ գիտությունը լեզվաբանությունն է, որով եւ այժմ զբաղվում եմ: Նույնիսկ այստեղ ամեն ինչ պարզ չէ, որեւէ վարկած ներկայացնելիս հակափաստարկների գոյությունը կարելի է եւ հաշվի առնել, եւ՝ ոչ: Ճշգրիտ գիտություններից յուրացրած աշխատանքային մեթոդով երբեմն չեմ անտեսում հակափաստարկները, թեպետ եղել են դեպքեր, երբ խորհուրդ են տվել դրանք մի կողմ թողնել»:

Ազգագրության, լեզվաբանության կամ հումանիտար գիտության մեկ այլ ճյուղի հանդեպ կենսաֆիզիկոսների կամ այլ մասնագիտության տեր մարդկանց հետաքրքրությունը նոր երեւույթ չէ գիտական աշխարհում: Պետրոսյանը նշում է նրանցից մի քանիսի անունները՝ ֆիզիկոսներ են եղել նշանավոր ազգագրագետ Ֆ. Բ. Մալինովսկին, հայագիտության մեջ մասնագիտությամբ գյուտաստեղծ է եղել Ասատուր Մնացականյանը, ներկայիս ազգագրագետներից մասնագիտությամբ ֆիզիկոս է Լեւոն Աբրահամյանը: Ի դեպ, անցած տարի հնագիտության ու ազգագրության ինստիտուտում կայացած հայկական էպոսին նվիրված միջազգային կոնֆերանսում հնչած 3 ելույթների հեղինակները եղել են ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողներ Լեւոն Աբրահամյանը, Արմեն Պետրոսյանը, Ասոն Ոսկանյանը (վերջինս հետո տեղափոխվել է փիլիսոփայության ֆակուլտետ):

Պետրոսյանը ցավում է, որ գիտությունը մեզանում որոշ չափով կասայավորված է. «Խորհրդային տարիներին կար լենինգրադյան գիտություն, կար նաեւ մոսկովյան: Լենինգրադյան արեւելագիտությունը նման էր գերմանականին՝ ոչ յուրայիններին այնտեղ չէին ընդունում, ունեին իրենց սեփական կուտերն ու գնում էին նրանց հետքերով: Լայն ու բաց գիտություն էր, աղբյուրագիտորեն հիմնավոր, աշխատանքային խիստ մեթոդներով: Մոսկվայանն այդպիսին չէր: Մինչեւ հիմա էլ դրանց միջեւ որոշակի տարբերություն կա: Արեւելագիտությունն ամենուրեք խաղաքանցված է, խորհրդային գիտությունը հակաթուրքական էր, ի տարբերություն ամերիկյանի, խաղաքան հակադրվածությունն այնտեղ բավականին նկատելի էր:

Հայաստանում ունենք լեզվաբանների հրաշալի դպրոց, որը, սակայն, կորչում գնում է, իսկ շարունակվողը արեւմտյան գիտությունն է, որում հաճախ միայն մեկ տեսակետ է իշխում: Տավոր սրտի, ժամանակի ընթացքում մեզանում ձեւավորվեց, այսպես ասած, «ազգային-ազատագրական գիտություն», որտեղ գլխավոր գործող անձինք դարձան ոչ մասնագետները, կարեւոր չէ՝ նրանք ֆիզիկոս են, քիմիկոս, թե երկրաբան: Իհարկե, մարդիկ բացի իրենց մասնագիտությունից, կարող են զբաղվել նաեւ այլ գիտություններով, կարելի է ավարտել պատմության ֆակուլտետն ու լինել վաս պատմաբան, բայց քիմիական ֆակուլտետն ավարտելով դառնալ լավ պատմաբան: Հարցի գլխավոր գործոնը գիտականը չէ, այլ գիտության հանդեպ «ազգային-ազատագրական» մոտեցումը: Գիտությունն այլ մեթոդներ ու մոտեցումներ է պահանջում, ըստ իս, պետք է դասել կոնկրետ գործերով, ինչպես Քրիստոսն է ասել՝ նայել ծառի պտուղներին: Հիմա «հայագիտական» այնպիսի գրքեր են գրվում ու հրատարակվում, որոնք ուղղակի դուրս են տրամաբանությունից»:

Գիտական մոտեցումից բացի, Պետրոսյանը չափազանց կարեւոր է համարում նաեւ հայագիտությամբ զբաղվողի կրթվածությունն ու լեզուների իմացությունը: Անգլերենին ինքը տիրապետել է 40 տարեկանում, ֆրանսերենին՝ 43, գերմաներենին՝ 47, լավ հասկանալով, որ առանց դրանց հնարավոր չէ գիտական մնայուն արժեքներ ստեղծել ոչ առասպելաբանության, ոչ էլ լեզվաբանության ու պատմության բնագավառներում: Տավոր, մեր իրականության մեջ հիշ, գրեթե հազվադեպ են հանդիպում այդ տարիքում օտար լեզուներ սովորելու կամք ունեցող գիտնականներ: «Մեր գիտության գլխավոր խնդիրն այն է, որ հումանիտար գիտությամբ զբաղվողներն օտար լեզուներ չգիտեն», ասում է Արմեն Պետրոսյանը:

Գիտության մեջ «ազգային-ազատագրական» շարժման «հերոսական սխրանքների» մասին բազում պատմություններ կարելի է լսել գիտությունների ազգային ակադեմիայի լեզվաբանության, պատմության, գրականության եւ ազգագրության ինստիտուտներում:

Լեզվաբանության ինստիտուտի տնօրեն Լավրենտի Հովհաննիսյանի աշխատասենյակի գրադարանում կարելի է գտնել Սերգեյ Պետրոսովի «Շուշի: Անվան եւ հողատարածքային հարցերի հիմնավորումներ», Սանասար Կոծինյանի «Բանն ու բանասերները» եւ այդօրինակ բազմաթիվ գրքեր:

Հովհաննիսյանին զարմացնում է այն, որ հանկարծակի լեզվաբանության ոլորտ ներխուժողների գրքերը հովանավորվում ու հրատարակվում են: «Նրանցից մեկը կարծեմ մաթեմատիկոս է, Ղարաբաղի տեղանուններն իբր ստուգաբանում է ինտեգրալ հավասարումներով: Ուղղակի աբսուրդ է՝ Շուշի բառը, ըստ նրա, պիտի լինի մշուշի: Եվ անընդհատ գրքեր է հրատարակում»: Հովհաննիսյանը կարծում է, որ այդպիսի գրքեր գրողները հիմնականում կամ անգործ, կամ էլ մասնագիտությամբ չկայացած մարդիկ են: Բացառությամբ թերեւս ակադեմիկոս Պարիս Հերունու, որն այնուամենայնիվ իր բնագավառում հայտնի գիտնական է: Իսկ մյուսները ճանաչում ձեռք բերելու, փառաբանվելու խնդիր ունեն: Դրանցից մեկը ոչ մի լեզվաբանի ու պատմաբանի կարծիք չի ընդունում, ոչ էլ իր պես մեխանիկի կարծիք, ինքն է որ կա՝ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը ինտեգրալ հավասարում լուծել չգիտի, իսկ պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը՝ հայոց պատմությունից գաղափար չունի: «Ոչ ներքին գրաքննություն կա, ոչ արտաքին: Մի ժամանակ որոշեցինք այդ տեսակ գործերն ուղարկել պարտադիր խմբագրման, բայց պարզվեց, որ դա հրատարակչի իրավունքն է՝ ինչպես կուզի, այնպես էլ կհրատարակի: Երեւի թե այսօր բոլոր գիտություններն են անպաշտպան, բայց լեզուն՝ առավել եւս, որովհետեւ հայոց լեզվի մասին գրքերն անհամեմատ կարդացվող են: Մանավանդ այդպիսի հիմարությունները կարդացվում են, չէ՞, դրա համար էլ հրատարակում են ու լցնում: Սա է մակարդակը, մի անգամ ասել եմ, որ սա վտանգավոր է հատկապես ապագայի համար: Պատկերացրեք, 100 տարի հետո մի գիտնական որոշի մեր այսօրվա գիտության պատմությունը գրել եւ նրա ձեռքն ընկնեն այս գրքերը: Անկասկած, կմտածի, որ մենք խառն դարում ապրող ժողովուրդ ենք, որովհետեւ գիտական արժեքավոր գործեր հրատարակելու փոխարեն սրանք ենք լույս ընծայել»:

ՌՈՒԶԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

# Նորանկախ Հայաստան. 5000 օրերի բեռով

Հանրահայտ կարծիք կա, որ լավ գործարարը նա է, ով ոչ թե իր փողերն է օգտագործում, այլ՝ այլոց: Ասվածի վառ օրինակն է մեր հայրենակից Քըրք Քըրքորյանի գործունեությունը. 15 մլրդ դոլար կազմող նրա հարստության մեջ 100 տոկոս իրեն պատկանող որեւէ բիզնես նա չունի: Քըրքի մասին հաղորդումներում մշտապես նշվում է, որ այս կամ այն ընկերությունում նրա մասնաբաժինը հազիվ հասնում է 8-10 տոկոսի:

Ինչու է պետք խոսել այս մասին. որովհետեւ նորանկախ Հայաստանի կենսագրությունը ուղղագծող մեր այն գործարարները, ովքեր տարիներ շարունակ օրենսդիր մարմնում տնօրինում են մեր ճակատագիրը եւ ներկայանում որպես ազգային գործիչներ, ընդգծված մենատերեր են: Նրանց մի զգալի մասը հիմա էլ է պատրաստվում նախընտրական քարոզարշավի: Հեռուստաէկրաններից ու ամբիոններից, թերթերի էջերից ու ընտրողների հետ հանդիպումների ընթացքում նրանք փորձելու են մեզ համոզել, թե ինչ լավն են իրենք, ինչքան հոգատար են մեր հանդեպ, հայրենասեր են անմնացորդ, իսկ հայասեր՝ ամբողջ էությամբ: Իսկ թե ինչու ենք մենք այս ամենով հանդերձ այսչափ աղքատ, նրանց բացատրությունը մեկն է՝ համակարգային փոփոխությունների արդյունքները ժամանակի ընթացքում են ուղղագծվելու: Բայց չգիտես ինչու համակարգային այդ ցնցումները մի շարք երկրների պարագայում այն հետեւանքները չունեցան, ինչ կա մեզանում: Մեր պատերազմն ու բարեփոխումները հիմնականում ավարտվել են, իսկ հայ մարդը իր մոտալուտ ապագայի հանդեպ որեւէ լավատեսություն չի տածում: Ինչո՞ւ. որովհետեւ նրա աշխատանքը, ով ունի իհարկե, պարզապես ցածր է գնահատվում. նա էլ իրեն հայտնի ու անհայտ միջոցներով խոչընդոտում է աշխատանքի լիարժեք արդյունավետության բարձրացմանը: Սատանայական շղթա հիշեցնող այս գործընթացի արդյունքում որոշ ձեռնարկատերեր հայտարարում են վնասներով աշխատելու մասին: Արդյոք նման ծանր վիճակում կհայտնվե՞ր, այս կամ այն ձեռնարկությունը, եթե մինչ գործարանի վերաբահագործումը ենթարկեր այն բժշկեցիրական սկզբունքով շահագործելու հարցը: Կամ արդյոք պատահակա՞ն է «Ջերմուկ»-ի շուրջն սկսված աղմուկը: Այն թերեւս նման ընթացք չստանար, եթե մեր գործարարները նախընտրելին հանդես գալ միջազգային որեւէ բրենդի ընկերակցությամբ: Մենաշիրությունը հանգեցնում է շահերի սման իր բազում հետեւանքներով:

Նախընտրական շրջանում կխոսվի՞ արդյոք հայաստանյան մենաշիրական բիզնեսը գոնե մասամբ բաժնետիրականի վերածելու գործընթացի մասին, կուրվագծվի առաջիկայում: Այլ պարագայում հայ տնտեսվարը պարտադրված է լինելու կարեկցանքի ու ամոթանքի խոսքերի ուղեկցությամբ հաղթահարել իր իսկ ստեղծած խոչընդոտները:

Ինչ մնում է բաժնետիրության պայմաններում հայ գործարարի նորովի ընդլայնմանը, այս դաշտն ուղղակի անընդգրկելի է: Ինչքան էլ մենք բարելավենք զուտ տեղական արտադրատեսակները, հասարակության մեջ կան նրանք, ովքեր նախընտրելու են եվրոպականն ու ամերիկյանը, ճապոնականն ու իսրայելականը: Ի վերջո հանրությունն ունի նաեւ բազում այլ պահանջներ, որոնք հնարավոր չէ իրականացնել Հայաստան երկրում. արեւադարձային մշակաբույսեր մեր տարածքում չեն աճի նաեւ առաջիկա հարյուրամյակներում, վառելիքի ու տրանսպորտային միջոցների ներկրումներն էլ են ավելանալու: Կանադայի պես հզոր գյուտատեսություն ունեցող երկրում 1 բնակչի հաշվով միայն գյուղմթերքների տարեկան ներմուծումը 2004 թվականին կազմել է 500 դոլար, Շվեյցարիայում՝ 1000 դոլար, Բելգիայում՝ 2300 դոլար, Լյուքսեմբուրգում՝ 3400 դոլար: ՀՀ-ում մեր այսօրվա ցուցանիշը մոտ 100 դոլար է: Մենք գրեթե ոչինչ չգիտենք կանադացի ու շվեյցարացի, բելգիացի ու լյուքսեմբուրգցի միլիոնատերերի մասին: Փոխարենը վստահաբար կարելի է ասել, որ միջին խավի վրա հիմնված այս հանրությունները առավել բարձր պատասխանատվությամբ են մոտենում իրենց աշխատանքի արդյունքում կազմավորվող երկրի բյուջեներին: Հիշատակված եվրոպական երկրներում բյուջեն կազմում է համախառն ներքին արդյունքի մոտ 60 տոկոսը: 100 հազարավոր բաժնետերերը սիրահոժար են մասնակցում երկրի ծախսերը հոգալու գործընթացին, քանզի այն պայմանավորում է իրենց իսկ բարեկեցությունը:

Պատկերն այլ է 3-րդ աշխարհի երկրներում, ուր նույն այդ պարենային ապրանքների ներմուծումները միանիշ թվերով են արտահայտվում: Հուրախություն, մերն այսօր եռանիշ թիվ է եւ տնտեսական արձանագրվող աճի պայմաններում, եթե անգամ բեւեռացումը չհաղթահարվի, հասարակության գնողունակությունը կշարունակի բարձրանալ: Այնպես որ, հայ գործարարները անհանգստանալու տեղ այնքան էլ չունեն:

Մեր կյանքը կշարժվի՞ արդյոք համամարդկային այս արժեքներով, մասամբ կուրվագծվի մայիսի 12-ի ընտրությունների արդյունքներով: Հարկ է, որ նորանկախ Հայաստանում ապրած մեր 5000 օրերը մեզ ինչ-որ բան հուշեն ու սովորեցնեն: Նախանշանները կան, մնում է ընթացքը:

ԳԵՂԱՄ ԲՅՈՒՐՈՒՅԱՆ

# «Որեւէ երկրի միջնորդության կարիքը չունենք»

## *Հայտարարում է Իրանի արտգործնախարարությունը բրիտանացի զինծառայողների առնչությամբ*

**«Ազգը»** նախորդ համարում անդրադառնալով Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Մարգարեթ Բեքեթի Թուրքիա կատարած այցի ընդհատմանը, դա պայմանավորել էր մարտի 23-ին Պարսից ծոցում ձերբակալված բրիտանացի 15 նավաստիներին Անկարայի միջնորդությամբ ազատելու նախաձեռնության ձախողմամբ:

Մարտի 28-ին Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Ռիադում, մասնակցելով Արաբական լիգայի գագաթաժողովին, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն այնտեղ Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարար Մանուչեհր Մոթթաքիի հետ քննարկել էր նավաստիների հարցը, իսկ թուրքական հանրային հեռուստատեսությունն ի լուր աշխարհի հայտարարել էր, որ Թուրքիայի միջնորդությունը նրանց ազատման հույսեր է ներշնչում:

Սակայն Իրանի արտգործնախարարության խոսնակ Մոհամմադ Ալի Հոսեյնիի կիսապաշտոնական «Միհր» գործակալությանն արած հայտարարությունն ի չիք է դարձրել այդ հույսերը: Մարտի 29-ին, ակնարկելով Թուրքիայի մասին, Հոսեյնին գործակալությանն ասել է հետեւյալը. «Թեհրանում Մեծ Բրիտանիան դեսպան ունի, գործում է այդ երկրի դեսպանատունը: Մենք Մեծ Բրիտանիայի դեսպանատան հետ որեւէ խնդիր չունենք: Այդ իսկ պատճառով երրորդ երկրի միջնորդության կարիք չենք զգում»:

Այնուհետեւ Իրանի արտգործնախարարության խոսնակը նշել է, որ Մեծ Բրիտանիայի դեսպանատան աշխատակիցներին հնարավորություն կտրվի հանդիպելու գերեվարված զինծառայողների հետ, երբ ավարտվի վերջիններիս հարցաքննությունը: Նույնիսկ նա հաստատել է բրիտանացի կին-նավաստու ազատ արձակման վերաբերյալ տեղեկությունների իսկությունը: Սակայն այդ նույն օրը նրան ուղղել է արտգործնախարար Մոթթաքին, պահանջելով, որ նախան կին զինծառայողի ազատումը Մեծ Բրիտանիան պետք է ընդունի իր սխալը:

Նրան է հավելել Եվրամիության հետ Իրանի գլխավոր բանակցող Ալի Լարիջանին: Նա Անգլիային մեղադրել է Իրանի միջուկային ծրագրի շուրջն աշխարհով մեկ աղմուկ-աղաղակ բարձրացնելու մեջ, ապա եւ նախազգուշացրել, որ այս աղմուկի շարունակման դեպքում կուշանա կին զինծառայողի ազատ արձակումը:

Այսպիսով, հաստատվել է **«Ազգի»** նախորդ համարում արտահայտված կարծիքը, թե իրանական գերությունից բրիտանացի 15 նավաստիների ազատ արձակումն այդքան էլ հետաքրքիր չի լինելու: Հիշեցման կարգով նշենք, որ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի զինվորները բրիտանացի նավաստիներին ձերբակալել էին Իրանի ջրային սահմանները խախտելու պատճառաբանությամբ, իսկ Մեծ Բրիտանիան մերժելով դա, մարտի 28-ին պաշտոնական հայտարարությամբ խզել էր իրանական կողմի հետ բոլոր տեսակի հարաբերությունները:

Հ. ՉԱԲԲԱՏԵՆ

ՕՏԱՐ ՏԵՍԱԿԵՏ

# Ինչպե՞ս պատերազմ սկսել

Անդրադառնալով Իռնա գործակալության եւ բրիտանական լրատվամիջոցների տարածած հաղորդումներին, որ Պարսից ծոցում իրանցիները բրիտանացի 15 նավաստիների են ձերբակալել, լոնդոնաբնակ անկախ լրագրող Գուին Դայերը գրում է, որ «լավ է, նրանք (սահմանախախտները) եղել են բրիտանացիներ: Եթե Մ. Նահանգների ռազմածովային ուժերի փոխհրամանատար Էրիկ Հորների խմբից լինեին, անպայման սպանված կլինեին, եւ Մ. Նահանգների եւ Իրանի միջեւ պատերազմ կսկսվեր»:

«Անդերվուդ» հետախուզանավի գործադիր պատասխանատու Հորները, որը «Քոռնոտլ» բրիտանական նավի հետ էր համագործակցում, «Ինդիփենդենթին» տված հարցազրույցում, ըստ Դայերի, նշել է, որ «բրիտանացիները ոչ միայն իրավունք, այլեւ պարտականություն ունեին պաշտպանվելու»: Հանձնվելու փոխարեն նրանք պետք է ինքնապաշտպանության դիմեին»:

Այս տրամաբանությամբ բրիտանացիները պետք է կրակ բաց անեին, որի անմիջական հետեւանքով բոլոր 15 նավաստիները ուժեղ կրակահերթի տակ կընկնեին, եւ իհարկե երկրները գործնական պատերազմի մեջ կլինեին արդեն: Կստեղծվեր անհեթեթ իրավիճակ:

Բարեբախտաբար բրիտանացիների վերաբերմունքը տարբեր է: Նրանք պատերազմների երկար փորձ ունեն, եւ ըստ ադմիրալ սըր Ալան Ուեսթի, «մենք չենք ցանկանում պատերազմներ սկսել»:

Բրիտանացիների այս մոտեցմանը հավանաբար տեղյակ լինելով, իրանցիները ձերբակալել են նրանց եւ ոչ թե ամերիկացիներին: «Եթե նրանք սխալմամբ հանկարծ ամերիկյան կամ կոալիցիոն ուժերի նավերի անձնակազմերին ձերբակալեին, նախագահ Բուշը հիանալի պատրվակ կունենար հարձակվելու եւ արդեն իսկ ռումբեր տեղացած կլինեին Իրանի վրա», եզրակացնում է Գուին Դայերը:

Հ. Օ.

# Թռչնագրիպից չին դեռահաս է մահացել

**Չինաստանում թռչնագրիպից մահացել է 16-ամյա մի դեռահաս: Այդ մասին հաղորդում է Սինհուա գործակալությունը, վկայակոչելով երկրի առողջապահության նախարարության հայտարարությունը: Պատանին, որի ազգանունը Ու է, ապրում էր Անհույ նահանգի Բենբու քաղաքում: Մարտի 18-ին նրան հիվանդանոց էին տարել բոքաբորբի ախտանիշներով: Պատանին ունեցել է բարձր ջերմություն եւ մկանային ցավեր: Նա մահացել էր մարտի 27-ին: Անցկացված հետազոտությունները հաստատել են 16-ամյա դպրոցականի օրգանիզմում թռչնագրիպի H5N1 վիրուսի առկայությունը: Հիվանդի հետ շփված բոլոր անձինք առնված են բժիշկների հսկողության տակ: Նրանց օրգանիզմում առայժմ կասկածելի ախտանիշներ չեն հայտնաբերվել:**

# Սան Ֆրանցիսկոյում արգելվեցին պոլիէթիլենային տոպրակները

Սան Ֆրանցիսկոյի քաղաքային վարչության խորհուրդը մարտի 27-ից արգելել է հանրախանութներում կենսաբանորեն չքայքայվող պլաստիկե տոպրակների օգտագործումը:

«Նյու Յորք թայմս» թերթի տվյալներով, նախագծի հեղինակ Ռոս Միրքարիմին կարծում է, որ միջոցառումը կնեղմացնի մոլորակի ընդհանուր ջերմացման եւ նավթի պաշարների սպառման հետեւանքները:

Քաղաքի բնակիչները տարեկան մոտ 200 մլն պլաստիկե տոպրակ են օգտագործում, որոնց մեծ մասը պատռվում է նավթամթերքների արգասիք պոլիէթիլենից: Կենսաբանորեն քայքայվող տոպրակներին ու փաթեթներին անցնելը թույլ կտա խնայել տարեկան 1 մլն 700 հազար լիտր նավթ, ինչպես նաեւ տարեկան 1400 տոննայով կնվազեցնի հողում թաղվող աղբի քանակությունը:

Հանրախանութների սեփականատերերը, սակայն, կարծում են, թե պոլիէթիլենային տոպրակների արգելումը միայն կավելացնի իրենց ծախսերը: Նրանք վստահ չեն, թե նոր տոպրակները կկարողանան ներկայիս պոլիէթիլենային տոպրակների չափ բեռ կրել, եւ հարկ կլինի ավելի շատ տոպրակ արտադրել:

Ընդունված որոշումն ուժի մեջ կմտնի 6 ամիս հետո: Մինչեւ 2020 թ. Սան Ֆրանցիսկոն լիովին անցնելու է անթափոն արտադրության:

# ԱՄՆ-ը դժգոհ է սաուդցի թագավորի «Իրաքի անօրինական օկուպացում» արտահայտությունից

**ԱՄՆ Պետդեպարտամենտի ներկայացուցիչը երեկ իբրեւ «սխալ» է բնութագրել Սաուդյան Արաբիայի Աբդուլլահ թագավորի արտահայտությունը Իրաքի «անօրինական օտարերկրյա օկուպացման» վերաբերյալ:**

**Ֆրանսպրեսը մեջբերում է ամերիկացի դիվանագետի հետեւյալ խոսքերը. «Ամերիկյան ուժերն Իրաքում են գտնվում իրաքցիների խնդրանքով եւ ՄԱԿ-ի մանդատին համապատասխան: Դրան հակասող ամեն մի դատողություն սխալ է»:**

**Միաժամանակ Պետդեպարտամենտի ներկայացուցիչն ավելացրել է, որ սաուդցի թագավորի արտահայտությունը չի վատթարացնի ամերիկա-սաուդյան հարաբերությունները:**

**Նախօրեին էր Ռիադում Արաբական պետությունների լիգայի 19-րդ գագաթաժողովի բացմանը ելույթ ունենալով՝ Աբդուլլահ թագավորը մասնավորապես ասել էր. «Մեզ հոգեհարազատ Իրաքում, օտարերկրյա անօրինական օկուպացման պայմաններում, մեր եղբայրների արյունն է հեղվում»:**

Պ. Ք.

ՏԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

# Ֆինանսական սկանդալ Եվրոհանձնաժողովում

**Եվրամիության հիմքը դրած Հռոմի պայմանագրի 50-ամյակի տոնակատարությունը համընկավ Եվրոհանձնաժողովում բացահայտված ֆինանսական սկանդալին: Ձերբակալվեցին երեք իտալացիներ, որոնցից մեկը Եվրոհանձնաժողովի պատասխանյա է: Ենթադրվում է, որ հանձնաժողովի պատասխանյաներից ոմանք 10 տարի շարունակ մի քանի միլիոն եվրոյի հասնող կաշառքներ են ստացել հանրային շուկաների բաշխման հարցում արտոնությունների շնորհման դիմաց:**

**«Ֆիգարո» թերթի տվյալներով, Բրյուսելում քննություն է սկսվել հիշյալ երեք իտալացիների նկատմամբ, որոնք ամբաստանվում են «կաշառակերության, զեղծարարության, շորթումների եւ հանցախմբի կազմակերպման» ամբաստանություններով:**

**Իտալացիներից մեկը՝ Ջանկառլո Ջոտտին, Եվրոհանձնաժողովի պատասխանյա է, անշարժ կայքի ենթակառույցների վարչության նախկին պետը: Սերջո Տրիկարիկոն իտալացի եվրոպատգամավորներից մեկի խորհրդարանական կցորդն է, իսկ Անջելո Տրոյանոն՝ անշարժ կայքի շինարարության պետ:**

**Բոլոր երեք ամբաստանյալները ծնունդով Իտալիայի ծայր հարավում գտնվող միեւնույն գյուղից են, ինչը քննիչներին հիմք է տալիս ենթադրություն անել մաֆիայի հետ նրանց կապի մասին:**

**Բելգիայի արդարադատությունը որոնում է երեք իտալացիների հանցակիցներին: Ֆրանսիայի արեւելքում՝ Մոզելում հսկողության տակ է առնվել մի ձեռնարկատեր: Փարիզի շրջանում հարցաքննության է ենթարկվել երեք իտալացիների հետ կապեր ունեցած մի ձեռնարկատեր: Բելգիայում եւ Լյուքսեմբուրգում սառեցվել են մի քանի կասկածելի բանկային հաշիվներ:**

Պ. Ք.

# Մոլորակի ամենաբարձրահասակը գտավ իր կեսին

**Գինեսի ռեկորդների գրքում ընդգրկված աշխարհի ամենաբարձրահասակ տղամարդը՝ 56-ամյա Բաո Տզինշուն երկար որոնումներից հետո վերջապես գտել է իր հարսնացուին՝ Տզիա Շուժուանին, որը նրա կես տարիքն ունի: Բաոի, որը նախարապան է, հասակը 2 մետր 36 սմ է, իսկ հարսնացուինը՝ 1 մետր 68 սմ: Երկուսն էլ, ըստ «Պեկին Նյուզի» հաղորդագրության, ներքին Մոնղոլիայի Չիֆենգ ավանից են:**

**Փեսան բանակում ծառայելուց հետո ընդգրկվել է բասկետբոլի մի խմբում, իսկ ներկայում ռեկլամային հոլովակներում է նկարահանվում: Հարսնացուն վաճառողուհի է:**

Հ. Օ.

# Թլպատումն իբրեւ ՄԻԱՎ-ի կանխարգելման ուղի

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն աշխարհին տեղեկացրել է փորձագետների նոր, սկանդալային առաջարկի, որի համաձայն թլպատումը կարող է մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ) դեմ կանխարգելիչ միջոց դառնալ:

Մահմեդական աշխարհում ընդունված այս միջոցառումը կրոնական իմաստից զատ նաեւ առողջապահական, հիգիենիկ խնդիր է իրականացնում: Ըստ ամենայնի, այսօր աշխարհում այնքան հրատապ է դարձել ՄԻԱՎ-ի գլոբալ սպառնալիքին հակադարձելու անհրաժեշտությունը, որ փորձագետները նման ծայրահեղ մեթոդ են առաջարկում, որը, սակայն, կարող է խիստ անբարյացակամ հակազդեցության արժանանալ քրիստոնեական ու բուդդայական աշխարհում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը եւ ՄԱԿ-ի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ծրագիրը խորհրդակցություն են հրավիրել, որի ընթացքում քննարկվել է, թե թլպատումն իսկապե՞ս կարելի է հանձնարարել իբրեւ ՄԻԱՎ-ի դեմ պաշտպանական միջոց: Անկախ ամեն ինչից, խորհրդաժողովը հաստատեց սպիդի տարածվածության բարձր մակարդակ ունեցող երկրներին առաջարկում է անցնել թլպատումների կենսաձեւի:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության նոր հանձնարարականն ընդգծում է, որ թլպատումը պետք է կանխարգելման փաթեթի բաղկացուցիչ լինի, փաթեթ, որը ներառում է հետեւյալ պահանջները՝ պահպանակների ճիշտ եւ հետեւողական օգտագործում, սեռական զուգընկերների թվի կրճատում եւ ոչ ավանդական սեռական կապերից ձեռնպահ մնալու վարքաձեւ:

Կ. Պ.

ԱԶԳ

# Մշակույթ

# Պարզեւ երկնային, Պատի՞ժ երկրային

Եռաբեր կառույց է Ալիս Հովհաննիսյանի գեղարվեստական ոգեւումը՝ ագուցված հրաղարակախոսական ադամանդներով, որոնք, հղկունափայլ լինելու հեռ կարծր են ու սրաերիզ այնքան, որ ածելու ոգեւ կտրում-փրթում են «զոհին»: Առաջին շերտը մեր կյանքն է, աշխարհի կյանքը՝ Ալիսը ամեն ինչից առաջ եւ ամեն ինչից զատ կենսասուն գրող է: Այս նախազգացմանը կտիրի նույնիսկ ծույլ ընթերցողը, որ սկզբի համար անոյայման կարծիք բան է որոնում: Եվ եթե նրա ձեռքն ընկնի «Ելք դեպի ներս» ժողովածուն՝ ամփոփող արդի հայ կին գրողների արձակը, լույս տեսած 2006-ին եւ խրան ծառայած մեր այս դիտարկումների համար, բացի ու կարդա Հովհաննիսյանի «Գլոբալացում» պատմվածքը, ապա հավանաբար կհամաձայնի մեզ հետ, որ մասնավորից ընդհանուրը, ազգայինից աշխարհայինը գնալու նրա հակումը ամփոփ, գունեղ ու ծրագրային ամբողջականությամբ մատուցված է այդտեղ: Դա այն գլոբալացումը չէ, որի թրթուրներից սարսափում ենք մենք, այլ մտավոր, հոգեւոր ու ֆիզիկական ինքնաիրացման, ինքնարտահայտման զուտ ֆիզիոլոգիական նույնականության վավերացում է՝ հատուկ ամեն բանական արարածի՝ տիեզերքի որ հատվածում էլ գտնվի ու որ ցեղին էլ պատկանի նա: Ընդհանրականությունը դրանով սպառվում է, հետեւում են առանձնակին, յուրահատուկը, եզակին, այն, ինչ ամեն մեկի դիմաղատկերը, մտակոյքն ու վարքաբարը դարձնում է անկրկնելի, ստեղծում մարդկային տեսակի տարերանգը: Պոետիկ տեսականը գործնականի վերածելու հեռաբրքրական փորձ է «Ուրախ դաշտահանդես...» պատմվածքը, ուր կենցաղից վեհը տանող կամ հակառակ հաջորդականությամբ իրար են լրացնում իռլանդական ու հայկական զատաշումները՝ բարդ մտահղացում, կատարված պարզ, համոզիչ զգացմունքայնությամբ եւ անմիջականությամբ:

Արձակագիր-հրապարակախոսը որոնում եւ գտնում է այն անհատներին, ովքեր օժտված են մարդասիրական շնորհով, ովքեր ունակ են եւ հեղինակի գրչի զորությամբ իվերջո հասու են դառնում իրենցում արտացոլելու ուրիշին եւ կամ իրենց արտացոլանքը նշմարել այլոց մեջ: Դարձյալ ծրագրային մի պատմվածք՝ «Ժպտացող շիրիմներ»: Մեր առջեւ է հանրահայտ կերպարը, ով, ինչի մասին խոսես, թեման շրջում է դեպի իր անձը, իր հիվանդությունը, հագնում մահամերձի դիմակ, չարաբախում մերձավորների համբերությունը, սերն ու գութը: Ով ճառագման ժամ՝... Գալիս է օրը, երբ նա համոզվում է՝ կա վատից վատը, ծանրից ծանրը, պետք է հասկանալ նրան, մտնել նրա կեղեւի մեջ, ապավեն կանգնել տնանկին: Հենց սրա գիտակցումն էլ կարծես կայտառացնում է նրան, իմաստով լցնում գոյության գուցե թե վերջին վայրկյանները: Մարդկային թույլ, ինքնամարիչ շինվածքների հնարավոր վերհանման հիմնադիր-տեսաբանը Գուրջիեւն է, վերեւում բերված բանաձեւի «ես՝ այդ դու ես...» հեղինակը, ազգությամբ հույն այն հին գյուտրեցիներից մեկը, որոնք, մեզ քաջ հայտնի ճանաչավոր ճանդակագործ Մերկուրովի նման «համով-լազաթով», կիրթ ու ճշգարիտ «քաղցի» են եղել եւ դեռ մեծարել են նրան իրենց փառահեղ գործերով: Գուրջիեւի թողած գրավոր ժառանգության տարանջատված էջերի միավորման փնտրտուքն էլ մեկնարկային պատճառ է ծավալելու մի համայնապատկեր, ուր դառնորեն միահյուսվում են անցյալ դարավերջին հային հասած ու ցայսօր երկիրը բզկտող մեծ արհավիրքները՝ երկաշարժն ու արտագաղթը: Ծյուրման բավիղները, որոնք արդեն նման են լայնահուն մայրուղու, տանում են այլեւայլ աշխարհներ, որոնցից ամենազգայունը, վստահաբար իրեն քաջածանոթն է՝ ընտրել Ալիսը: Ամերիկա: Այստեղից՝ հայը, Հայաստանը, հայի ճակատագիրը: Սա է երրորդ շերտը, որ կենսականության ցավագին լիցքեր է հաղորդում գրողի հոգեւոր որոնումներին: Կա եւ չորրորդ շերտը, որ կարելի է նաեւ տանել ամենից առաջ՝ Հովհաննիսյանի գեղարվեստական մտածողության առանձնահատկությունն է, նրա ոճը, սյուժետակերտարային բաշխումների դժվարությունը արտաքնապես դյուրին հաղթահարելու նրա կարողությունը:

Կյանքը, երկիրը, մարդը, նրա փոխհարաբերությունները օղակներ են, որոնք այս թե այն կերպ, բարի թե չար, մի օր ամբողջանում են, սեղմվում, փակվում ու հայտնի չէ, խեղդող են նրանք, թե՞ փրկող: Գրողը իր, իր ազգի, իր երկրի համար փրկություն է որոնում, նախազգուշացնելով սարսափելի նախադեպերից, որոնք հետամուտ են մարդկությանը, առանձնապես՝ հայ ժողովրդին: Միանգամայն հասկանալի են այսօր արդեն անհիշալ Հայր Ցոնսի մասին հիշատակումները, ով Գայանա երկրում կառուցեց «Ժողովրդական Տաճար» եւ իր զազրելի, ապրելու ընդդեմ իրավունքը խլող քարոզներով մոտ հազար մարդու սիրեց ինքնասպան լինել: Ակամա զուգադրում ես՝ արդյոք այդ ինքնակործանման մի տարատեսակը չէ՞ հայերի զանգվածային արտագաղթը թեկուզ դրախտային Ամերիկա ու նրանց միաձուլումը մեքսիկներին, չայնաներին, կորեացիներին, գվատեմալացիներին ու բյուրավոր այլոց, որոնք զբաղված են ամերիկյան հնաբնակ անգլոսաքսերի, հրեաների հագուստը, տների հատակը, պատուհանները, զուգարանները, աղբանոցները մաքրելով՝ հնազանդ անխուսափելի հեռանկարին, որը երաշխավորում է ազգության, լեզվի, ավանդույթի, անհատականության մոռտեռու կորուստ: Քի՞չ էր տասնհինգի եղեռնը, որ խլեց մեկուկես միլիոն կյանք, սա՝ արտագաղթը, որ նույնպես սպանդ է նրա ներգավորինքնակամ տարբերակով՝ հոգու սպանդ, խլում է, արդեն իսկ խլել է եւ ոչնչացնելու մոտ է առնվազն երկու միլիոն հայի ինքնություն: Եվ արդյոք յուրահատուկ հայրենասեր չէն նրանք, ովքեր չարաբախելով իրենց ընձեռած եթերային, այլեւայլ ամբիոնային հնարավորությունները, անընդհատ քարոզում են, թե արտագաղթից վախենալու հարկ չկա, թե մենք ոչ թե թշնամական, նվաճողական, դավադրական հանգամանքների, այլ մեր էությամբ ԳԱՂԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ենք, բառեր, որ պետք է վիրավորի ամեն հայի, ով ծնվել է, ապրել է ու ապրելու է Հայկական Պարի աջ եւ ահյակ լանջերին: Ապրել է, ապրելու է պապուցպապ, որդոցորդի եւ տեղաշարժվելու միտք անգամ չունի: Սրանք, այս սուտ մխիթարիչ-քարոզիչները, արդյոք չէն կատարում ապաշնորհ իշխանությունների թաքուն պատվերները: Նրանց, ում ձեռնտու է ժողովրդի արտահոսքը, ով թեթեւտիկ՝ կարծում է, թե նվազ մարդախանակը իր համար նվազ հոգսաբերհոգսաբեր է եւ իր կարծ մտքով չի էլ կարողանում գնահատել երկրի ներկա իրավիճակը, որը հղի է պատերազմով, լի կովողի, հաղթողի, երկիրը շենացնողի, լայնացնողի, բարեկարգողի պահանջով: Չի գիտակցում, որ Ղարաբաղի պատերազմը դեռ ավարտված չէ:

«Օղակը փակվում է» վեպի գլխավոր հերոսուհին, ամերիկուհի Քեթը, ի ուժ իր ջփումների եւ առավելապես հեղինակի կողմնապահության, հայերի նկատմամբ բարեհաճ է այն դեպքում, երբ մյուսներին պատրաստ է «մեծարել» հայհոյական-արհամարհական հասկացությամբ, որին մեր ականջն արդեն վարժվել է անդրօվկիանոսյան ֆիլմերից: Կողջունեիմ հեղինակի տրացավ վերաբերմունքը առ յուր մեծարգո ցեղակիցները, եթե Ամերիկայում միայն մի Քեթ լիներ, ցավոք, նրանց թիվը հազարներ է, սրան նրանից տարբերելու յանկիական ցանկությունը՝ գրեթե զրոյական եւ այսու հատատ հատոզված ենք, որ արհամարհական բառը, վերը ակնարկված, բռայլորեն հատցեագրվում է նաեւ հայերին: Ավել ինչ պահանջես «մագնատ սրուկների երկիր» Ամերիկայից, որի կրթյալ խաղաքաղաքացիները, իրենց ճշմարտությանը միանգամայն վստահ, հայտարարում են, թե Հայաստանը գտնվում է Օվկիանիայում՝ ինչ-որ տեղ Նոր Զելանդիայի թե Ավստրալիայի հարեւանությամբ: Մնում է միայն նավ նստել եւ «չոփ-չոփ» անել դեպի անծով Հայաստանի լեռնոտ ափերը: Հոգու դառնություններին մեծագույն սեր, հույս եւ հավատ խառնած, գրողը մեկ, այլ մտավոր, հոգեւոր ու ֆիզիկական ինքնաիրացման, ինքնարտահայտման զուտ ֆիզիոլոգիական նույնականության վավերացում է՝ հատուկ ամեն բանական արարածի՝ տիեզերքի որ հատվածում էլ գտնվի ու որ ցեղին էլ պատկանի նա: Ընդհանրականությունը դրանով սպառվում է, հետեւում են առանձնակին, յուրահատուկը, եզակին, այն, ինչ ամեն մեկի դիմաղատկերը, մտակոյքն ու վարքաբարը դարձնում է անկրկնելի, ստեղծում մարդկային տեսակի տարերանգը: Պոետիկ տեսականը գործնականի վերածելու հեռաբրքրական փորձ է «Ուրախ դաշտահանդես...» պատմվածքը, ուր կենցաղից վեհը տանող կամ հակառակ հաջորդականությամբ իրար են լրացնում իռլանդական ու հայկական զատաշումները՝ բարդ մտահղացում, կատարված պարզ, համոզիչ զգացմունքայնությամբ եւ անմիջականությամբ:

Արձակագիր-հրապարակախոսը որոնում եւ գտնում է այն անհատներին, ովքեր օժտված են մարդասիրական շնորհով, ովքեր ունակ են եւ հեղինակի գրչի զորությամբ իվերջո հասու են դառնում իրենցում արտացոլելու ուրիշին եւ կամ իրենց արտացոլանքը նշմարել այլոց մեջ: Դարձյալ ծրագրային մի պատմվածք՝ «Ժպտացող շիրիմներ»: Մեր առջեւ է հանրահայտ կերպարը, ով, ինչի մասին խոսես, թեման շրջում է դեպի իր անձը, իր հիվանդությունը, հագնում մահամերձի դիմակ, չարաբախում մերձավորների համբերությունը, սերն ու գութը: Ով ճառագման ժամ՝... Գալիս է օրը, երբ նա համոզվում է՝ կա վատից վատը, ծանրից ծանրը, պետք է հասկանալ նրան, մտնել նրա կեղեւի մեջ, ապավեն կանգնել տնանկին: Հենց սրա գիտակցումն էլ կարծես կայտառացնում է նրան, իմաստով լցնում գոյության գուցե թե վերջին վայրկյանները: Մարդկային թույլ, ինքնամարիչ շինվածքների հնարավոր վերհանման հիմնադիր-տեսաբանը Գուրջիեւն է, վերեւում բերված բանաձեւի «ես՝ այդ դու ես...» հեղինակը, ազգությամբ հույն այն հին գյուտրեցիներից մեկը, որոնք, մեզ քաջ հայտնի ճանաչավոր ճանդակագործ Մերկուրովի նման «համով-լազաթով», կիրթ ու ճշգարիտ «քաղցի» են եղել եւ դեռ մեծարել են նրան իրենց փառահեղ գործերով: Գուրջիեւի թողած գրավոր ժառանգության տարանջատված էջերի միավորման փնտրտուքն էլ մեկնարկային պատճառ է ծավալելու մի համայնապատկեր, ուր դառնորեն միահյուսվում են անցյալ դարավերջին հային հասած ու ցայսօր երկիրը բզկտող մեծ արհավիրքները՝ երկաշարժն ու արտագաղթը: Ծյուրման բավիղները, որոնք արդեն նման են լայնահուն մայրուղու, տանում են այլեւայլ աշխարհներ, որոնցից ամենազգայունը, վստահաբար իրեն քաջածանոթն է՝ ընտրել Ալիսը: Ամերիկա: Այստեղից՝ հայը, Հայաստանը, հայի ճակատագիրը: Սա է երրորդ շերտը, որ կենսականության ցավագին լիցքեր է հաղորդում գրողի հոգեւոր որոնումներին: Կա եւ չորրորդ շերտը, որ

տագաղթը թեկուզ դրախտային Ամերիկա ու նրանց միաձուլումը մեքսիկներին, չայնաներին, կորեացիներին, գվատեմալացիներին ու բյուրավոր այլոց, որոնք զբաղված են ամերիկյան հնաբնակ անգլոսաքսերի, հրեաների հագուստը, տների հատակը, պատուհանները, զուգարանները, աղբանոցները մաքրելով՝ հնազանդ անխուսափելի հեռանկարին, որը երաշխավորում է ազգության, լեզվի, ավանդույթի, անհատականության մոռտեռու կորուստ: Քի՞չ էր տասնհինգի եղեռնը, որ խլեց մեկուկես միլիոն կյանք, սա՝ արտագաղթը, որ նույնպես սպանդ է նրա ներգավորինքնակամ տարբերակով՝ հոգու սպանդ, խլում է, արդեն իսկ խլել է եւ ոչնչացնելու մոտ է առնվազն երկու միլիոն հայի ինքնություն: Եվ արդյոք յուրահատուկ հայրենասեր չէն նրանք, ովքեր չարաբախելով իրենց ընձեռած եթերային, այլեւայլ ամբիոնային հնարավորությունները, անընդհատ քարոզում են, թե արտագաղթից վախենալու հարկ չկա, թե մենք ոչ թե թշնամական, նվաճողական, դավադրական հանգամանքների, այլ մեր էությամբ ԳԱՂԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ենք, բառեր, որ պետք է վիրավորի ամեն հայի, ով ծնվել է, ապրել է ու ապրելու է Հայկական Պարի աջ եւ ահյակ լանջերին: Ապրել է, ապրելու է պապուցպապ, որդոցորդի եւ տեղաշարժվելու միտք անգամ չունի: Սրանք, այս սուտ մխիթարիչ-քարոզիչները, արդյոք չէն կատարում ապաշնորհ իշխանությունների թաքուն պատվերները: Նրանց, ում ձեռնտու է ժողովրդի արտահոսքը, ով թեթեւտիկ՝ կարծում է, թե նվազ մարդախանակը իր համար նվազ հոգսաբերհոգսաբեր է եւ իր կարծ մտքով չի էլ կարողանում գնահատել երկրի ներկա իրավիճակը, որը հղի է պատերազմով, լի կովողի, հաղթողի, երկիրը շենացնողի, լայնացնողի, բարեկարգողի պահանջով: Չի գիտակցում, որ Ղարաբաղի պատերազմը դեռ ավարտված չէ:

«Օղակը փակվում է» վեպի գլխավոր հերոսուհին, ամերիկուհի Քեթը, ի ուժ իր ջփումների եւ առավելապես հեղինակի կողմնապահության, հայերի նկատմամբ բարեհաճ է այն դեպքում, երբ մյուսներին պատրաստ է «մեծարել» հայհոյական-արհամարհական հասկացությամբ, որին մեր ականջն արդեն վարժվել է անդրօվկիանոսյան ֆիլմերից: Կողջունեիմ հեղինակի տրացավ վերաբերմունքը առ յուր մեծարգո ցեղակիցները, եթե Ամերիկայում միայն մի Քեթ լիներ, ցավոք, նրանց թիվը հազարներ է, սրան նրանից տարբերելու յանկիական ցանկությունը՝ գրեթե զրոյական եւ այսու հատատ հատոզված ենք, որ արհամարհական բառը, վերը ակնարկված, բռայլորեն հատցեագրվում է նաեւ հայերին: Ավել ինչ պահանջես «մագնատ սրուկների երկիր» Ամերիկայից, որի կրթյալ խաղաքաղաքացիները, իրենց ճշմարտությանը միանգամայն վստահ, հայտարարում են, թե Հայաստանը գտնվում է Օվկիանիայում՝ ինչ-որ տեղ Նոր Զելանդիայի թե Ավստրալիայի հարեւանությամբ: Մնում է միայն նավ նստել եւ «չոփ-չոփ» անել դեպի անծով Հայաստանի լեռնոտ ափերը: Հոգու դառնություններին մեծագույն սեր, հույս եւ հավատ խառնած, գրողը կերտում է հայ մարդկանց կերպարները, որոնք իրենց հերթին մատառում են վառ պահելու ազգային «իմիջը»՝ աշխատասիրությունը, խնայողականությունը, կառչածությունը սեփական կերպարին. ամերիկացին մորթում է ոչխարը եւ փոստը բրդով դեն գցում, ծառայող հայ կանայք թաքուն դրանք հավաքում են, բուրդը պոկում, լվանում, վերմակ-ներքնակ կարում եւ վաճառում նույն հայերին, որոնց իսկական բրդե անկողինը պետք է որ գեթ մի պահ նեստեր հայրենի եզերք... Սակայն մի կերպար, Հակոբը, որ չէր կարող Ամերիկայում Հակոբ չդառնալ, ցնցում է հայ մնալու, հայավարի նիստուկացը պահպանելու, մեծուփոքր հարգելու, անագորույն պայմաններում անգամ ծիծաղն ու կատակը պահպանելու, միաժամանակ նոր կենսակերպին հարմարվելու իր ճկունությամբ: Չի խորհում ամենատարին աշխատանքից, թեեւ արդեն դարձել է աղբամաններից տարաներ հավաքողների տեֆ: Հակոբը մյուսներից երեւի երկար հայ կմնա, համառորեն մատաղացու ոչխար կառնի, թամադայություն կանի, հոգեպահաս կունենա, հյուրին, որ ժամին էլ գա, դռնից հետ չի տա, թե գնա, ես քեզ չեմ հրավիրել, հացուջուր կտա... Եվ եթե նրա եւ նրա նմանների կեցվածքին փիլիսոփայական բանաձեւում տայինք, ապա, ելնելով գրողի նյութից, կասեինք. կյանքը պարզեւ է երկնային եւ պատիժ երկրային, անվերջ պայքար՝ մաքառման դժոխային ուղին երջանկության սուտ կաթիլներով ցողելու համար: Արժե՞ ապրել հանուն այդ փերանքների: Այո՝ այն էլ հազար անգամ...

Հայրենակիցնե՛ր, նստե՛ք, մնացե՛ք ձեր տանը, ձե՛ր երկիրը շենացրեք, նրա ծեղը ուրիշի ոսկուց թանկ գնահատեք, այս է գրողի ճիչը: Հասկանալի է նրա ծիգուջանքը հետ բերելու գաղթածներին: Գրողական երեւակայությունը նշագծում է ուղի, բացահայտ հուշելով, թե հայրենադարձության իրականացման համար կամք, ծրագրված նյութաբարոյական պայմաններ են պետք՝ տներ, աշխատատեղեր, արդարին միտված հասարակական մթնոլորտ: Հոգս, որ հրամայաբար պետական լինելուց զատ, ամեն մեկինս է: Որի իրեն հասանելիք մասն իր վրա է առել եւ պատվով կրում է Հովհաննիսյանը: Նաեւ նրանցն է, ովքեր գնացել են՝ իրավ, չպետք է լքել հայրենիքը, հարկ է կառչել նրանից, մնալ, ծուտը շտկել, բարին բազմացնել: Ահա եւ ապաշխարող գրական հերոս-հարուցը տարած է գնում Գառնիի մոտակայքում եւ հրավիրում իր հետ Հայաստան գալ նրանց, ում մեր ժողովրդին հասած դառնությունները օտարի ծոց են մղել:

- Ինչ եք կարծում, կգա՞ն,- հարցրի ես Ալիսին:

- Կգան, անպայման,- ասաց նա եւ ես հավատացի գեղագետին, ով իրապատության մեջ որոնում է ռոմանտիզմ եւ ռոմանտիզմը շաղախում իրապատությամբ:

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՅՈՆ

*(հատվածներով)*

ՄԵԾԱՐՈՒՄ

# Հայ թավջուքակի թագուհին 75 տարեկան է

Երեկ Արամ Խաչատրյանի անվան տուն-թանգարանը բազմամարդ էր: Տոնում էին անվանի թավջուքակահար, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի եւ բազմաթիվ մրցույթների դափնեկիր Մեղեա Աբրահամյանի ծննդյան 75 եւ գործունեության 55-ամյակները: Մեղեա Աբրահամյանի բարձր կատարողական արվեստի եւ 40-ամյա մանկավարժական գործունեության մասին ջերմ ու գնահատանքի խոսքեր հնչեցին ՀՀ մշակույթի նախարարության, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի հոյակապ ուղերձներում, որտեղ հատկապես նշված էին, թե ինչպես երաժիշտների երկնակամարում մեծ շուքով փայլել է Մեղեա Աբրահամյանի աստղը, զարդարելով մեր մշակույթը: Մեղեա Աբրահամյանը Մստիսլավ Ռոստրոպովիչի սանն է եղել, որի ծննդյան 80-րդ տարեդարձը նշվում է այս օրերին: Իր կատարողական արվեստով Մեղեա Աբրահամյանը գրավել է համաշխարհային բեմեր եւ արժանացել բազմաթիվ մրցանակների: Առանձնահատուկ ջերմ էր կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյանի խոսքը: Կոմպոզիտորը հետաքրքրական դրվագներ պատմեց, թե ինչպես Մեղեայի հետ մեծ դժվարությամբ Դիլիջանի կոմպոզիտորների տանն ստեղծել է թավջուքակի ու դաշնամուրի համար գրված պոեմը, նվիրված հենց Մեղեա Աբրահամյանին:

Մեղեա Աբրահամյանի ջանքերի շնորհիվ թավջուքակը մեզանում դարձավ հայեցի եւ շատ հայ կոմպոզիտորներ սկսեցին թավջուքակի համար ստեղծագործություններ գրել:

Կոնսերվատորիայի պրոֆեսոր Արհար Արտաշես Մկրտչյանը. «Մեր Մեղեան հայ կատարողական արվեստի ինքնատիպ եւ ամենամեծ ներկայացուցիչներից մեկն է, որը մեծ գործ է կատարել հայկական թավջուքակի դպրոցի զարգացման գործում: Նա փայլուն մենակատար է, անսամբլիստ, երաժիշտ: Նման կարգի մեծություններն, ըստ իս, հազվագյուտ են ծնվում եւ նրան առանց վարանելու կարող ենք անվանել հայ թավջուքակի թագուհի...»:

Հուզված եւ շոյված էր նաեւ տկն Մեղեան, որն իր շնորհակալական խոսքում ասաց. «Այս ամենն ինձ կրկին պարտավորեցնում է, որ այն, ինչ սովորել եմ իմ ուսուցիչներից, որոնց երախտապարտ եմ, փոխանցեմ իմ ուսանողներին, որոնք նույն նվիրումով, ինչպես ես, սիրում են թավջուքակը»:

Մեծարման երեկոյի ընթացքում հնչեցին Էդուարդ Միրզոյանի Շուբերտի, Բախի, Շումանի, Դե Բյուսիի եւ Բաբաջանյանի ստեղծագործությունները՝ գրված թավջուքակի, ջութակի եւ դաշնամուրի համար:

ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հայկական երգ ու պար Վերոնայում

Վերոնայի քաղաքապետարանի մշակույթի բաժնի եւ Վ. Բյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի միջեւ կնքվել է համագործակցության պայմանագիր: Սույն պայմանագրի գլխավոր նպատակն է բացահայտել երկու երկրների մշակութային նմանությունները:

Վերոնայի համալսարանից մի խումբ երիտասարդներ, որոնք ընդգրկված են Ռամիայի տունը միջմշակութային կենտրոնում, միմյանց եւ մյուսների (այս դեպքում Վ. Բյուսովի անվ. համալսարանի ուսանողների հետ) կարող հաստատելու համար ընտրեցին թատրոնը: Այս մտահղացումը հնարավորություն կտա այդ համալսարանի ուսանողներին մի շարք ներկայացումներ անցկացնել Իտալիայում, ինչպես նաեւ կատարել փոխանակումներ Հայաստանի եւ Իտալիայի ուսանողների միջեւ, կամրապնդի Հայաստանի եւ Իտալիայի ուսանողների կապերը, կօգնի ավելի լավ ճանաչել տվյալ երկրների մշակույթները:

Ծրագրի առաջին փուլի շրջանակներում ստեղծվել են լաբորատորիաներ, որոնք կնառայեն ֆանտազիայի, ստեղծագործման եւ, այսպես ասած, իբրեւ դարբնոց-վայր ուսանողների համար:

Նորաստեղծ թատրոնը ղեկավարում են իտալացի ռեժիսոր Առուելիո Սաբաչինոն եւ Ռամիայի տան կենտրոնի պատասխանատու Ելենա Միլիավական:

Ավելացնենք նաեւ, որ այդ համագործակցության շրջանակներում արդեն մարտի 26-ին Վերոնայի «E. F. Dall' Abaco» երաժշտական կոնսերվատորիայում «Ռամիայի տան» միջմշակութային կենտրոնի եւ «Ալիենո» թատրոնի համագործակցությամբ տեղի ունեցավ «Հանդիպում Հայաստանի հետ» խորագրով երեկո: Այնտեղ հնչեցին հայկական ազգագրական երգեր, երաժշտություն եւ ելույթ ունեցավ Ռամիայի տան կողմից հրավիրված Երեւանի Վ. Բյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի «Պատրանք» խումբը՝ բաղկացած ութ ուսանողներից: Փաստորեն, արվեց այդ համագործակցության առաջին եւ նշանակալի քայլը:

ԱՆՆԱ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ԱԶԳ Մարզական

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

# Հերթական դաղը հիասթափությունը

## Ադրբեջանցիներն էլ շրջանցեցին մեր ընտրանուն

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում իր չորրորդ պարտությունը կրեց՝ կրկին դաղը հիասթափություն պատճառելով հայ ֆուտբոլասերներին: Ընտրական 1-ին խմբի առաջատար Լեհաստանի հավաքականից կրած նվազագույն հաշվով պարտությունը թերեւ այնքան դառնություն չէր պատճառի, եթե մեր ֆուտբոլիստները գոնե արժանավայել խաղ ցուցադրեին եւ կարողանային լրջորեն մրցակցել լեհերի հետ: Սակայն ցավալի է, որ այս անգամ մեր հավաքականը չկարողացավ դրսեւորել գոնե իր նվազագույն հնարավորությունները: Ի տարբերություն նախորդ հանդիպումների, շատ թույլ ու անօգնական էին մեր պաշտպանները, որոնք գործում էին սխալներով: Եվ եթե չլիներ դարպասպահ Ռոման Բերեզովսկու վստահ խաղը, որը մի քանի դրվագներում պարզապես փրկեց մեր թիմին վերահաս գոլերից, ապա մեր ընտրանին խոշոր հաշվով կպարտվեր: Եթե Կարեն Դոխոյանի ոչ լավ մարզավիճակը կարելի է բացատրել այն բանով, որ նա երկար ժամանակ թիմ չէր գտնում «Կոիլյա Սովետովից» հեռանալուց հետո եւ չէր մարզվել, ապա ինչ արդարացում տալ մյուս պաշտպաններին, որոնք թերացան իրենց անմիջական պարտականությունները կատարելիս: Նրանք հաճախակի էին սխալվում պարզ իրադրություններում, չէին հասցնում միմյանց փոխադարձաբար հարձակվողներին հսկողությունից դուրս էին թողնում: Այս ամենի արդյունքում լեհերը հատկապես առաջին խաղակեսին կարողացան մի քանի անգամ լրջորեն սպառնալ մեր դարպասին: Դեռ լավ է, որ իրեն գերազանց դրսեւորեց Ռոման Բերեզովսկին: Բայց նա էլ անզոր էր, երբ 26-րդ րոպեին մեր տուգանային հրապարակում գնդակն ընդունեց հսկողությունից դուրս մնացած Մացեյ Ժուրավսկին: Խաղային այդ դրվագում նախ սխալվեց Դոխոյանը, ապա Ժուրավսկին խաբս տվեց նաեւ Արզումանյանին եւ մեր չորս պաշտպանների ներկայությամբ գնդակն ուղարկեց դարպասի հեռավոր անկյունը:

Դեռ լավ է, որ ընդմիջումից հետո լեհերը զգալիորեն նվազեցրին ակտիվությունը, այլապես մեր հավաքականը կարող էր պարտվել խոշոր հաշվով: Բայց նույնիսկ նման իրավիճակում, մեր հավաքականը չկարողացավ լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Ողջ հանդիպման ժամանակ մեր ֆուտբոլիստներին այդպես էլ չհաջողվեց մտածված ու վտանգավոր կոմբինացիաներ կազմակերպել, հարվածել դարպասին: Կատարված փոփոխություններն էլ խաղն աշխուժացնելուն ոչ մի կերպ չնպաստեցին: Առջեւի գծում սկզբում գործող Ռոբերտ Զեբելյանը, ընդմիջումից հետո նրան միացած Էդգար Մանուչարյանը խաղընկերների աջակցությունը չստանալով, ոչինչ չկարողացան անել: Մեր կիսապաշտպանական օղակն էլ խաղը կազմակերպելու առումով ոչնչով աչի չընկավ: Զգացվում էր դիսդեսչերի բացակայությունը: Շատ պասսիվ էր Արտավազդ Քարամյանը, որն իրավացիորեն փոխարինվեց: Մի խոսքով, ամբողջ հանդիպման ժամանակ այդպես էլ մեր հավաքականի գործողություններում չնշմարվեց որեւէ մտածված քայլ, որը սպառնալից լիներ մրցակցի համար: Նման խաղով բնականաբար դժվար էր դրական արդյունքի ակնկալել: Ուստի բնավ էլ զարմանալի չէ, որ մինչ օրս մեր ֆուտբոլիստներին չի հաջողվում բացել գոլերի հաշիվն ընտրական մրցաշարում: Նշենք, որ բացի Հայաստանից, ընտրական մրցաշարի 50 մասնակից հավաքականներից միայն Էստոնիայի ընտրանին առայժմ մրցակցի դարպասը չի գրավել:

Ֆուտբոլասերներից ոմանց համար գուցե առաջատարից կրած 0-1 հաշվով պարտությունը լավ արդյունքի ընկալվի: Մեզ համար չպետք է նաեւ սփոփանք հանդիսանա խաղի նախօրեին լեհերի գլխավոր մարզիչ Լեո Բենհակերի արտահայտած դրական կարծիքը մեր ընտրանու մասին. «ՀՀ հավաքականն ավելի ուժեղ է, քան Ադրբեջանը: Զգացվում է բրիտանացի մարզիչ Իան Պորտերֆիլդի ձեռագիրը, նրա կատարած աշխատանքը անշեղ աչքով էլ երեւում է: Հայ ֆուտբոլիստներն ավելի ուժեղ, արագ ու վճռական են, խաղում են եվրոպական ոճով եւ չեն երկնչում ուժեղ մրցակիցներից: Նրանք ընդունակ են մի քարտ հիմնախնդիրներ ստեղծել մրցակցի համար, ուստի պետք է պատրաստ լինել դրան: ՀՀ հավաքականն ավելի լավ է նախապատրաստված եւ կարողանում է գնդակ պահել»:

Շատերն ընտրական այս փուլում ՀՀ հավաքականի գլխավոր խնդիրը համարում են ադրբեջանցիներին հաղթելը եւ մրցաշարային աղյուսակում նրանց գերազանցելը: Ցավոք, առայժմ հեռակա մրցավեճում մենք գիջում ենք ադրբեջանցիներին, որոնք նախորդ տուրում, չորս օր առաջ լեհերից 0-5 հաշվով ջախջախիչ պարտություն կրելուց հետո, իրենց մեջ ուժ գտան շտկելու իրավիճակը եւ սեփական հարկի տակ խոշոր անակնկալ մատուցեցին՝ 1-0 հաշվով հաղթելով ֆիններին: Այս խմբում կայացած Սերբիա-Պորտուգալիա խաղում գրանցվել է ոչ-ոքի՝ 1-1:

Այսպիսով, մինչեւ հաջորդ ընտրական հանդիպումը, որը կկայանա հունիսին, ՀՀ հավաքականը կեզրափակի ընտրական 1-ին խմբի աղյուսակը, ինչը հայկական ֆուտբոլում տիրող անմխիթար վիճակի ցայտուն ապացույցն է:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Լեհաստան | 7 | 5 | 1 | 1 | 12-5 | 16 |
| 2. Պորտուգալիա | 6 | 3 | 2 | 1 | 13-4 | 11 |
| 3. Սերբիա | 6 | 3 | 2 | 1 | 8-4 | 11 |
| 4. Ֆինլանդիա | 6 | 3 | 2 | 1 | 7-3 | 11 |
| 5. Բելգիա | 6 | 2 | 1 | 3 | 4-6 | 7 |
| 6. Ղազախստան | 6 | 1 | 2 | 3 | 3-8 | 5 |
| 7. Ադրբեջան | 6 | 1 | 1 | 4 | 2-13 | 4 |
| 8. Հայաստան | 5 | 0 | 1 | 4 | 0-6 | 1 |

## Աղասին մեծ եկամուտ կստանա

Անցած տարեվերջին մեծ թենիսին հրաժեշտ տված Անդրե Աղասին ավարտել է իր ինքնակենսագրական գրքի աշխատանքները: Նրա գրքի հրատարակման համար կազմակերպված մրցույթում հաղթած հրատարակչությունը Աղասուն մոտ 5 մլն դոլար կվճարի:

## Բուրգոսի կյանքին վտանգ չի սպառնում

Ինչպես հայտնի է, Վախթանգ Դարչինյանի հետ մենամարտից անմիջապես հետո մեխիկացի բոքսամարտիկ Վիկտոր Բուրգոսը տեղափոխվել էր հիվանդանոց: Նա հայտնվել էր խորը կոմայի մեջ եւ գտնվում էր վերակենդանացման բաժանմունքում: Եվ ահա բժիշկները հայտարարել են, որ բոքսամարտիկի կյանքին այլեւս վտանգ չի սպառնում: Հիշեցնենք, որ Վախթանգ Դարչինյանը մարտի 3-ին Լոս Անջելեսում աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար մենամարտում նոկաուտի էր ենթարկել Բուրգոսին:

## Թեժ մրցախաղեր եվրոպական խաղադաշտերում

Պրեմբաբթին կրկին մեծ ֆուտբոլի օր էր Եվրոպայում: Կայացան Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի հերթական տուրի հանդիպումները: Մեծ անակնկալ էր հասունանում 3-րդ խմբի առաջատար Թուրքիայի եւ Նորվեգիայի հավաքականների մրցավեճում: Թուրքերը, որ նախորդ տուրում հյուրընկալվելիս 4-1 հաշվով ջախջախել էին Եվրոպայի չեմպիոն հույներին, սեփական հարկի տակ 0-2 հաշվով պարտվում էին նորվեգացիներին: Սակայն նրանց ի վերջո հաջողվեց խաղն ավարտել ոչ-ոքի (2-2): Թուրքերի պատիվը փրկեց Համիդ Ալթընթոփը, որը երկու անգամ գրավեց մրցակցի դարպասը, ընդ որում երկրորդ գոլը խփեց վերջին րոպեին:

Իտալացիները շնորհիվ Լուկա Տոնիի երկու գոլերի, հաղթեցին 2-րդ խմբի առաջատարներից մեկին՝ շոտլանդացիներին: Դա հնարավորություն ընձեռեց ուկրաինացիներին գլխավորելու աղյուսակը՝ հաղթելով Լիտվայի ընտրանուն (1-0): Անգլիայի ընտրանին, որի խաղը խիստ ինքնատության էր ենթարկվել նախորդ տուրում, հյուրընկալվելիս 3 անպատասխան գնդակ խփեց Անդորրայի հավաքականի դարպասը: Խոշոր հաշիվ գրանցվեց նաեւ Իսրայել-Էստոնիա (4-0), Ուելս-Սան Մարինո (3-0), Ռումինիա-Լյուքսեմբուրգ (3-0) հանդիպումներում:

Այս խաղերում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Վրաստան-Ֆարերներ՝ 3-1, Հունգարիա-Մոլդովա՝ 2-0, Մալթա-Հունաստան՝ 0-1, Իռլանդիա-Սլովակիա՝ 1-0, Չեխիա-Կիպրոս՝ 1-0, Իսպանիա-Իսլանդիա՝ 1-0, Հս. Իռլանդիա-Շվեդիա՝ 2-1, Լիխտենշտեյն-Լատվիա՝ 1-0, Սլովենիա-Հոլանդիա՝ 0-1, Բուլղարիա-Ալբանիա՝ 0-0:

ՍԱՀՄԱՆ

## Առնյանը գիջում է դիրքերը

Մոնակոյի շախմատի մրցաշարի 10-րդ տուրը չափազանց անհաջող էր Լեւոն Առնյանի համար: Նա ադրբեջանցի Թեյմուր Ռաջաբովի հետ անցկացրած երկու պարտիաներում էլ պարտվեց: Այս անհաջողությունն առավել եւս անսպասելի էր, քանի որ Ռաջաբովը հաջող չի խաղում Մոնակոյում: Մինչ Առնյանի հետ հանդիպումը Ռաջաբովը 18 հնարավորից 6,5 միավոր էր վաստակել եւ աղյուսակի ստորին հորիզոնականներում էր: Այս պարտությունները զգալիորեն վաստակրին Առնյանի մրցաշարային իրավիճակը: Վերջին տուրում հայ շախմատիստը մրցելու է ուկրաինացի Վասիլի Իվանչուկի հետ, որը սովորաբար Առնյանի համար դժվարին մրցակից է: 10 տուրից հետո Առնյանը 10,5 միավորով 5-7-րդ տեղերն է բաժանում Գելֆանդի եւ Մորոզեւիչի հետ:

Առաջատարի դերում իր հաղթարշավն է շարունակում աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կրամնիկը, որը վաստակել է 14,5 միավոր: Նա ոչ-ոքի ավարտեց Պյոտր Սվիդլերի հետ անցկացրած 2 պարտիաներն էլ: 12,5-ական միավորով հաջորդ տեղերում Անանդն ու Իվանչուկն են, այնպես որ Կրամնիկը գործնականում ապահովել է մրցաշարի հաղթողի կոչումը: Անանդը երկու պարտիաներում էլ խաղաղ դաշն կնքեց Լեկոյի հետ, իսկ Իվանչուկը մեկ միավոր վաստակեց Գելֆանդի հետ մրցավեճում: 1-1 հաշիվ գրանցվեց նաեւ Մորոզեւիչ-Կառլսեն, Վալդեխո-վան Վելի մրցախաղերում:

«Կոյր» շախմատում բոլորից հաջող է հանդես գալիս աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կրամնիկը, որը վաստակել է 8,5 միավոր: 6,5-ական միավոր ունեն Իվանչուկը, Գելֆանդը, Սվիդլերը: Առնյանը վաստակել է 5 միավոր:

Արագ շախմատում անգերազանցելի է Վիշվանաթան Անանդը, որը 10 հնարավորից վաստակել է 8 միավոր: Նա միակն է, որ արագ շախմատում պարտություն չի կրել, ինչպես Կրամնիկը, Իվանչուկն ու Սվիդլերը «կոյր» շախմատում: Երկրորդ ցուցանիշն ունի Վասիլի Իվանչուկը՝ 6 միավոր: 5,5-ական միավորով հաջորդ տեղերում են Կրամնիկը, Լեկոն ու Առնյանը:

## Դարչինյան-Արսե մենամարտը թերեւս կայանա տարեվերջին

Մեխիկացի բոքսամարտիկ Խորխե Արսեի պրոմոութեր Բոբ Արումը հայտարարել է, որ նրա մենամարտը IBF-ի վարկածով թեթեւագույն քաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Վախթանգ Դարչինյանի հետ հնարավոր է, որ կայանա այս տարվա վերջին: Մարիլի 14-ին Արսեն պետք է մենամարտի թեթեւ քաշում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Քրիստիան Միխարեսի հետ: Դրանից հետո հուլիսի 28-ին նախատեսված է Արսեի մենամարտը WBA-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Մարտին Կաստիլյոյի հետ: «Դարչինյան-Արսե մենամարտի անցկացման մասին խոսում են ավելի քան երկու տարի: Եթե նախկինում Դարչինյանը ամերիկյան հասարակությանն այնքան էլ հայտնի չէր, ապա այժմ նրա մենամարտերից մի քանիսը ցուցադրվել են ամերիկյան հեռուստատեսությամբ: Showtime հեռուստաալիքն արդեն առաջարկել է Արսե-Դարչինյան մենամարտի ցուցադրումը, քանի որ հարձակողական ոճի երկու բոքսամարտիկների առաջիկա մենամարտը որեւէ տոպի զարդը կկազմի»- հայտարարել է Բոբ Արումը:

## Ռունին վերջապես վճռել է ամուսնանալ Կոլինի հետ

«Մանչեսթր յունայթեդի» եւ Անգլիայի հավաքականի հարձակվող Ուեյն Ռունին վերջապես հայտարարել է ընկերուհու՝ Կոլին Մակլաֆլինի հետ ամուսնանալու որոշման մասին: Ըստ բրիտանական Sunday Times թերթի, նրանց ամուսնությունը կկայանա 2008 թ. ամռանը՝ ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ավարտից հետո:

Անցած շաբաթ «աստղային» զույգը հարսանյաց հանդեսը լուսաբանելու բացառիկ իրավունքի մասին պայմանագիր է կնքել «աստղերի» կյանքը լուսաբանող «Hello» ամսագրի հետ: Վերջինս այդ իրավունքի համար ամուսնական զույգին պետք է 1,5 մլն ֆունտ ստեռլինգ վճարի: Դա ամսագրի պատմության մեջ ամենախոշոր գումարն է, որ պետք է վճարվի «աստղերի» հարսանյաց հանդեսը լուսաբանելու համար: Այն նույնիսկ գերազանցում է Դեյվիդ եւ Վիկտորյա Բեքհեմներին կամ էլ Քեթրին Զետա-Ջոնսին ու Մայքլ Դուգլասին ժամանակին վճարած գումարը: Բոլորովին վերջերս ամսագիրը 1մլն ֆունտ ստեռլինգ էր վճարել դերասանուհի Լիզ Հեուլիի հարսանյաց հանդեսը Մեծ Բրիտանիայում եւ Հնդկաստանում լուսաբանելու համար: Ըստ լրատվամիջոցների, Ուեյն Ռունին հիացած էր մնացել, թե ինչպես էին կազմակերպվել Հեուլիի հարսանյաց հանդեսի պաշտպանությունը լրագրողներից, որոնք ցանկացել էին լուսաբանել այդ իրադարձությունը: «Hello»-ի հետ կնքած պայմանագրով ամսագիրը կլուսաբանի նաեւ այս տարվա մարտի վերջին Կոլին Մակլաֆլինի ծննդյան 20-ամյակի արարողությունը:

21-ամյա Ուեյն Ռունին ներկայումս Անգլիայի Պրեմիեր լիգայի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստներից է: Նրա շաբաթական աշխատավարձը «Մանչեսթր յունայթեդում» 100 հազար ֆունտ ստեռլինգ է: Բացի այդ, երիտասարդ ֆուտբոլիստը զգալի եկամուտ է ստանում «Նայքի» հետ կնքած 10-ամյա պայմանագրից, ինչպես նաեւ «Կոկա Կոլայի» գովազդումից: 20-ամյա Կոլինն էլ վատ չի վաստակում: Անցած տարի նա 400 հազար ֆունտ ստեռլինգի պայմանագիր է կնքել «Բարի գալուստ իմ աշխարհ» գրքի համար, որում պատմում է իր անցած կյանքի ուղու մասին՝ հասարակ աշակերտուհուց մինչեւ ֆոտոմոդել ու նորաձեւության մասնագետ: Այդ գիրքը Մեծ Բրիտանիայում մեծ պահանջարկ ունի: Նշենք, որ Ռունին եւ Մակլաֆլինը ծանոթ են դեռեւս դպրոցական տարիքից եւ 2003 թ.-ից նշանված են:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

armentel «Արմենտել» ՓԲԸ դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ ՀՀ տարածքում GSM ցանցի համար 1720.3-1732.3 ՄՀց եւ 1815.3 1827.3 ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստանալու համար:

*Արմենիա Տելեֆոն Կոմպանի*

# Ծանուցումներ

*Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ)*
*Հատուկ դասընթացների բաժին*

## 2007 ապրիլ-մայիս ամիսներին առաջարկվող դասընթացներ

***Հասարակայնության հետ կապեր (PR)***
Դասընթացի տեւողությունը՝ 2007 ապրիլի 10-ից մինչեւ 2007 հուլիսի 3-ը
Դասընթացի վարձը՝ 100 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

***TOEFL iBT նախապատրաստական դասընթաց***
Դասընթացի տեւողությունը՝ 2007 ապրիլի 16-ից մինչեւ 2007 մայիսի 22-ը
Դասընթացի վարձը՝ 60 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

***GRE (Verbal & MATH) նախապատրաստական դասընթաց***
Դասընթացի տեւողությունը՝ 2007 ապրիլի 09-ից մինչեւ 2007 հունիսի 4-ը
Դասընթացի վարձը՝ GRE Verbal 75 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)
GRE MATH 60 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

***GMAT (Verbal & MATH) նախապատրաստական դասընթաց***
Դասընթացի տեւողությունը՝ 2007 ապրիլի 09-ից մինչեւ 2007 մայիսի 31-ը
Դասընթացի վարձը՝ GMAT Verbal 67 500 դրամ (ներառյալ ԱԱՀ)
GMAT MATH 60 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

***Անգլերենի դասընթաց բժիշկների եւ բժշկական ոլորտի աշխատակիցների համար***
Դասընթացի տեւողությունը՝ 2007 մայիսի 07-ից մինչեւ 2007 հունիսի 20-ը
Դասընթացի վարձը՝ 65 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

***Անգլերենի դասընթացներ յոթ փուլով***
Յուրաքանչյուր փուլի տեւողությունը՝ 2007 մայիսի 07(08)-ից մինչեւ 2007 հուլիսի 06(07)-ը
Դասընթացի վարձը՝ 90 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

***Դասընթացների գրանցման պայմաններին տեղեկանալու համար դիմել***
***Հատուկ դասընթացների գրասենյակ***
***Հասցե՝ ՀԱՀ, Մարեալ Բաղրամյան պողոտա 40, Երեւան, 0019, Հայաստան***
***Հեռ.՝ 37410 51 27 06 (05, 04)***
***Էլ. հասցե՝ extension@aua.am***

## ACBA-CREDIT AGRICOLE BANK

Ս.թ. ապրիլի 17-ին ժամը 16:00-ին «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Արարատ» մասնաճյուղում (հասցե՝ Ք. Արշաքունի, Շահումյան փ. 31) տեղի կունենա «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովը:

## ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը մարտի 27-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը, հաստատեց ԿԲ 2006 թ. ֆինանսական հաշվետվությունը:

*ԿԲ մամուլի ծառայություն*

Կաբվե իրերի արտադրությամբ զբաղվող նորաստեղծ **«Երամեխ» կազմակերպությունը փնտրում է** 20-45 տարեկան կանայք եւ աղջիկներ, որոնք սկզբնական շրջանում սովորելով եւ հմտանալով համապատասխան մասնագետների մոտ, կաշխատեն արտադրամասում որպես կարող բանվորուհիներ:

Տեղեկությունների համար զանգահարել 45-43-16 կամ 22-02-47 (կարող եք թողնել հաղորդագրություն):

### ՀԱՍՏԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԱՆՈՒՏՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ. ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է **ՀՀ Արարատի մարզի Արշաքուն խաղողի «Իսակով» թաղամասին** ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 33 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-որ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. ապրիլի 5-ին, ժամը 16-00 Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ ջրային ռեսուրսների*
*կառավարման գործակալություն*

www.azgdaily.eu

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ դրամավարկային քաղաքականության վարչության արտաքին տնտեսական հարաբերությունների բաժնի «մակրոտնտեսագետ» թափուր աշխատատեղի համալրման համար.*

**Աշխատանքի նպատակն է.**
Արտաքին հաշվեկշռվածության եւ մրցունակության գնահատման նպատակով իրական փոխարժեքի վարագծի վերլուծություն: Դրամավարկային քաղաքականության մշակման եւ իրականացման նպատակով վճարային հաշվեկշռի եւ նրա առանձին հոդվածների վերլուծություն եւ կանխատեսում: Գործընկեր եւ հարեւան երկրների տնտեսությունների զարգացումների ուսումնասիրում:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**
Վերլուծում եւ գնահատում է Հայաստանի իրական եւ իրական հավասարակշիռ փոխարժեքի վարագիծը: Կատարում է ՀՀ արտաքին հաշվեկշռվածության գնահատման վերլուծություններ:

Վերլուծում է ՀՀ վճարային հաշվեկշիռը դրամավարկային քաղաքականության մշակման եւ իրականացման համար, գնահատում եւ կանխատեսում է դրա հոդվածները, պարբերաբար կատարում է դրանց ճշգրտումներ:

Ուսումնասիրում է ՀՀ արտաքին առեւտրի գործընկեր եւ հարեւան երկրների տնտեսական զարգացումներն ու կառավարությունների քաղաքականությունները: Ուսումնասիրում է ՀՀ հետ արտաքին առեւտրի ընթացքը եւ վերլուծում վերջիններիս տնտեսությունների ՀՀ տնտեսության վրա ունեցած հնարավոր ազդեցությունները

Մասնակցում է ՀՀ ԿԲ հրապարակումներին (գնաճի եռամսյակային հաշվետվություններ):

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը**
Բարձրագույն տնտեսագիտական կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ (միջազգային տնտեսագիտության հետ առնչվող պետական կամ ոչ պետական հաստատություններում)

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 4 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ (միջազգային տնտեսագիտության հետ առնչվող պետական կամ ոչ պետական հաստատություններում)

**Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝** մակրոտնտեսագիտություն (խորացված), միջազգային տնտեսագիտության (խորացված), դրամավարկային տեսություն (միջանկյալ), տնտեսական վիճակագրություն (միջանկյալ), մաթեմատիկական վիճակագրություն եւ էկոնոմետրիկա (խորացված), բանկային վիճակագրություն (միջանկյալ), բանկային օրենսդրություն եւ նորմատիվային դաշտի տիրապետում (միջանկյալ), հաշվապահություն (միջանկյալ), միկրոտնտեսագիտություն (միջանկյալ), բանկային գործ (ներածական), ֆինանսական վերլուծություն (միջանկյալ)

**Լեզուների իմացությունը՝** հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների ազատ տիրապետում:

**Անհրաժեշտ հմտություններ՝** համակարգչով աշխատելու հմտություն (MS Office), վիճակագրական ծրագրեր:

**Աշխատավարձը.** Աշխատակիցներին տրվում է ՀՀ շուկայում մրցունակ աշխատավարձ (249.500 դրամ)

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 18 ապրիլի 2007թ.

**Պահանջվող փաստաթղթերը.**
- դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am /«Մեր մասին»/«Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում )
- անձնագիր, անձնագրի պատճեն
- սոցիալական ապահովության քարտ, սոցիալական ապահովության քարտի պատճեն
- դիպլոմ, դիպլոմի միջուկ, դիպլոմի եւ դիպլոմի միջուկի պատճեններ
- գինգրոսկ, գինգրոսկի պատճեն (արական սեռի ներկայացուցիչների համար)
- աշխատանքային գրքույկի պատճեն
- երկու գունավոր լուսանկար, 3x4 չափսի

Մրցութային հարցաշարը եւ ՀՀ կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www. cba.am ) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 56-14-40 եւ 06-34 (ներքին)

***ԿԲ մամուլի ծառայություն***

### ՀԱՇԿՈՊԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
**առ. 31/12/2006**

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը | «ԵԵՎՐԱՍ» ՍՊԸ |
| Գործունեության տեսակը | Գրավաճառ |
| Պետական գրանցման համարը | 28611006133 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | 40-02701219 |
| Գտնվելու վայրը | Տիգրան Մեծի 3 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | |
| Տիգրան Մեծի 3 | |

**1 ՀԱՇԿՈՊԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**

| | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|
| ԱԿՏԻՎ | |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | |
| Հիմնական միջոցներ | 66 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 66 |
| II. Ընթացիկ ակտիվներ | |
| Կարճ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 20 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 712 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 2560 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 3292 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 3358 |
| | **Հաշվետու տարի** |
| ՊԱՍԻՎ | |
| III. Սեփական կապիտալ | |
| Կանոնադրական կապիտալ | 50 |
| Ընդամենը սեփական կապիտալ | -1767 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | -1717 |
| Կարճաժամկետ փոխառություններ | |
| Կարճ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 5000 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց. ապահովագրության գծով | 13 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություն | 62 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 5075 |
| | 3358 |

**2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

| Ցուցանիշի անվանումը | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամսական) |
|---|---|
| Արտադրանքի, իրացումից հասույթ | 125 |
| Հանձնված ծառայություններ (վնաս) | 125 |
| Վաճառված ծախսեր | -1892 |
| Արտադրանքի, ապրանքների ծառայությունների, իրացումից շահույթ (վնաս) | -1767 |
| Գործառնական շահույթ (վնաս) | -1767 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | -1767 |
| Զուտ շահույթ (վնաս) նախորդ շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | -1767 |
| Զուտ (վնաս) ծախսի նվազեցումից հետո | -1767 |

**3 ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ**

| Սեփական կապիտալի տարրերի | Կանոնադ. կապ. | Կուտ. (վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2005 թ. | 0 | | 0 |
| Բաժնետերերի հետ բաժնետոմսերի գծով | 50 | | 50 |
| Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս) | | -1767 | -1767 |
| Մնացորդը առ 31/12/2006 | 50 | -1767 | -1717 |

**4 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

| | գումար | դրամարկղ դրամ | բանկային հաշիվներ դրամ |
|---|---|---|---|
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից | | | |
| Գործառնական այլ գործունեությունից, | 137 | | 137 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր | 137 | | 137 |
| Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով | 38 | | 38 |
| Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից | 748 | 748 | |
| Վճարումներ բյուջե | 32 | | 32 |
| Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ | 52 | | 52 |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր, | 1154 | 1154 | |
| Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր | 2024 | 1902 | 122 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | -1887 | -1902 | 15 |
| Ոչ նյութական ակտիվների վաճառքից | 109 | 109 | |
| Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝ | 669 | 669 | |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր | 778 | 778 | |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր | 1381 | 1381 | |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | -603 | -603 | |
| Սեփական կապիտալի գործիքների թողարկումից եւ վերավաճառքից | 50 | 50 | |
| Ստացված վարկերից եւ փոխառություններից | 5000 | 5000 | |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր | 5050 | 5050 | |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 5050 | 5050 | |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 2560 | 2545 | 15 |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | 2560 | 2545 | 15 |

**5 Կարճաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ**

| Ցուցանիշի անվանումը | Հաշվետու տարի |
|---|---|
| Կարճաժամկետ փոխառություններ | 5,000 |
| Ընդամենը | 5,000 |

**5 Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին**

| Հարկատեսակի անվանումը | Հաշվետու տարվա |
|---|---|
| Եկամտահարկ | 13 |
| Ընդամենը | 13 |

**5 Հաշվեկշիռ հոդվածների մարման ժամկետների դասակարգումը**

| | Երկարաժամկետ գումարներ |
|---|---|
| ԱԿՏԻՎ | |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | |
| Հիմնական միջոցներ | 66 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 66 |
| II. Ընթացիկ ակտիվներ | |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 3292 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 3292 |
| Ընդամենը ակտիվներ | 3358 |
| ՊԱՍԻՎ | |
| III. Սեփական կապիտալ | |
| Կանոնադրական կապիտալի զուտ գումար | 50 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, | -1767 |
| Ընդամենը սեփական կապիտալ | -1717 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | |
| Ընթացիկ պարտավորություններ, | 5075 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություն | 5075 |
| Ընդամենը պասիվներ | 3358 |

**5 Հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրություններ**
**Հիմնական միջոցներ**

| Դասի անվանումը | Ավելացում | Հաշվետու տարվա |
|---|---|---|
| Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ | | |
| Մեքենաներ եւ սարքավորումներ | 66.0 | 66.0 |
| - արժեք | 66.0 | 66.0 |
| Ընդամենը շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ | 66.0 | 66.0 |
| Ընդամենը հիմնական միջոցներ | 66.0 | 66.0 |
| - արժեք | 66 | 66 |

**5 Արտահաշվեկշռային հաշիվներ**

| Ցուցանիշի անվանումը | Հաշվետու տարվա |
|---|---|
| Որպես գրավ պահվող ակտիվների | 712 |

**5 Ֆինանսական արդյունքների հաշվետվություն ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ**

| | |
|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 125 |
| Անձնակազմի գծով ծախսումներ | -1021 |
| Գործառնական այլ ծախսումներ եւ ծախսեր | -871 |
| Գործառնական շահույթ (վնաս) | -1767 |
| Սովորական գործունեությունից շահույթ | -1767 |
| Զուտ շահույթ (վնաս) նախորդ շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | -1767 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | -1767 |

Ղեկավար
Գլխավոր հաշվապահ

Արշակ Հարությունյան
Անահիտ Հարությունյան

ՏԵՂԵԿԱՏՎՈՒ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-28-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ալեքսիեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 29.03.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: